Azg
Ազգ
28 ՓԵՏՐՈՒԱՐ 2008 ՀԻՆԳՇԱԲԹԻ 38 (3932)

Հանձնաժողովը նախազգուշացրեց զերծ մնալ չհիմնավորված թանկացումներից

Ինչպես տեղեկացանք սնեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի լրատվական ծառայությունից, երեկ տեղի ունեցած նիստի ժամանակ, հանձնաժողովը, արձանագրելով որոշ ապրանքատեսակների թանկացումներ, նախազգուշացրեց սնեսվարող սուբյեկտներին զերծ մնալ հակամրցակցային համաձայնությունների կամ գերիշխող դիրքի չարաշահումների միջոցով գների չհիմնավորված բարձրացումներից: Միաժամանակ, հանձնաժողովը որոշել է մոնիտորինգն ավելի ինտենսիվ դարձնել, պարբերականությունը դարձնելով մինչև յուրաքանչյուր երկու օրը մեկ, իսկ առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների ցանկը հասցնել 20-ի:

Ա. Մ.

ՕՐԵՐԻ ՀԵՏ

Քաղաքական ֆոլկլոր՝ ոչ ֆոլկլորային հետեւանքներով

Ամենից վաղ խորհուրդ՝ քան նախորդ օրը Հանրապետության հրապարակում հանրահավաք կազմակերպելը, երեւի ոչ ոք չէր սպասել Սերժ Սարգսյանին: Վաղ՝ ոչ միայն նրա համար, որ ի պատասխանություն նորընտիր նախագահի հավաքված բազմության մի մասը հետո գնաց թամաշայի՝ Ազատության հրապարակում տեղի ունեցող իրադարձություններին, իսկ երեքներից եկածներն էլ առեւտրի՝ «Ֆիրդուսնոցում»: Այլ այն պատճառով, որ, ինչպես ես եմ հասկանում, ուժի ցուցադրությանը միտված հանրահավաքն ավելի ուժ տվեց, նոր ընչառություն՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմնակիցներին, ովքեր նախորդ օրն արդեն հոգնության նշաններ էին սկսել ցույց տալ: Նորընտիր նախագահն իր ազդու ելույթը, երդումով ամրագրված խոստումներն ու համագործակցության կոչն արտահայտելու այլ ամբիոն կարող էր հետո-ռեն գտնել: Փոխարենը նա հանրահավաքը, փաստորեն, նոր մղում տվեց «թվերի պատերազմին», որտեղ Լ. Տեր-Պետրոսյանն ու նրան ծայնակցող մամուլը երեւակայության պակաս բնավ չեն զգում թվեր «կրակելու» գործում. դու հավաքում ես 100 հազար, ես կհավաքեմ 500 հազար: Այս օրերին ո՞վ է հաշվողը: Շուտով մեր ավելի քան միլիոնանոց մայրաքաղաքը, նորաթիններն էլ հետը, կլինի Ազատության հրապարակում:

Այս բոլորը հայկական քաղաքական ֆոլկլորի մաս է կազմում արդեն՝ տանջարանքներով, սպիտակ կամ եռագույն դրոշներով, վանկարկումներով, ֆոյերիով, արեւածաղկի սերմով, թանկանոց սուրբ-մարկեսները խնողող բոմբերով, հացադուլավորներով, կրակոց ճառերով ու երգերով: Ցմրոանանք, սակայն այդ ֆոլկլորի չարագուշակ մասը՝ մահակավոր-սաղավարտակիր ոստիկանությանը, որն արդեն սկսել է ծերբակալել ոչ միայն զինված անձերներին (ինչը վաղուց, տարիներ առաջ արդեն պիտի կատարած լիներ), այլեւ Սուրեն Սուրենյանցի, Առամ Կարապետյանի եւ մի քանի ուրիշ քաղաքական գործիչների: Անվտանգության ուժերի զսպողական գործողությունները կարող են վերածվել անզուսպ արարքների, վերահսկողությունից դուրս բերելով ողջ իրավիճակը, որն արդեն լարված է:

Սակայն դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է, որ ինքնազուսպ լինեն Լ. Տեր-Պետրոսյանն ու հանրահավաք-երթի մյուս կազմակերպիչները: Մեր երկրում տիրող իրավիճակից իրավացիորեն դժգոհ եւ իրենց բողոքն անկեղծորեն բարձրաձայնող ցուցարարներին պետք չէ ամբոխի վերածել: Ամբոխը, այն էլ խելագարված ամբոխը, վերահսկելի չէ, նույնիսկ իր առաջնորդների համար: Գալիս է մի պահ, երբ նման բազմություններն իրենց առաջնորդից պահանջում են ոչ թե այն, ինչ նա է ուզում, այլ այն՝ ինչ իրե՛նք են ուզում: Դա արդեն խաղ չէ, ոչ էլ ֆոլկլոր: Ամենեւին: Մանավանդ զինադադարի մեջ գտնվող մեր նման երկրներում:

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ընդդիմությունից արդեն արձագանքել են Սերժ Սարգսյանի համագործակցության կոչին

Գագիկ Ջհանգիրյանը Սերժ Սարգսյանի համար քաղաքական գործիչ չէ

ՄԱՐԻՆԵՍԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ազգային ժողով-կառավարություն հարցուպատասխանը երեկ սպասված էր լրագրողների համար, որովհետեւ նրանք հեռընտրական իրավիճակի հետ կապված բազմաթիվ հարցեր ունեին գործող վարչապետին-նոր ընտրված նախագահին՝ Աժ նիստից հետո: Սակայն **Սերժ Սարգսյանը** թուղթով պատասխանեց միայն հարցերից մեկին եւ գնաց: Մինչ այդ էլ նիստերի դահլիճում առանձնապես թեժ հարցուպատասխան տեղի չէր ունեցել, քանի որ ՀՀԿ-ական պատգամավորները խոսում էին սնեսական աճը երկրի ծայրամասերը հասցնելու անհրաժեշտությունից եւ գլոբալ գյուղատնտեսական ծրագրերից, դաշնակցական պատգամավորները նույնպես ոլորտային հարցեր հնչեցրին, ՕԵԿ-ական պատգամավորները ներկա չէին եւ միայն «Ժառանգության» երկու պատգամավոր հրավիճակի հետ կապված հարցեր տվեցին:

Բայց մինչ այդ Աժ նախագահ **Տիգրան Թորոսյանը** շնորհավորեց Սերժ Սարգսյանին նախագահական ընտրություններում տարած հաղթանակի առիթով, քանի որ այս հառօրյան ԿԸՀ-ի կողմից ընտրությունների վերջնական արդյունքները հայտարարելուց հետո առաջին նիստն էր, եւ հույս հայտնեց Աժ-նախագահ արդյունավետ համագործակցության: Տ. Թորոսյանի՝ Ս. Սարգսյանին մատուցած սպիտակ վարդերի ծաղկեփունջը վերջինս փոխանցեց Հրանուշ Հակոբյանին, որն էլ դրանցից բաժին հանեց մյուս կին պատգամավորներին:

Պատասխանելով «Ժառանգությունից» Անահիտ Բախչյանի այն հարցին, թե քաղաքական ուժերին եւ հասարակական միավորումներին ուղղված Ս. Սարգսյանի նախորդ օրվա համագործակցության կոչի տակ ինչ գործողություններ կան, Ս. Սարգսյանը նկատեց, թե նախորդ օրն իր ելույթում ասել է, թե ինչպիսի համագործակցություն է առաջարկում՝ ընդհուպ կոալիցիոն կառավարության ձեւավորում: Բայց ավելի չմանրամասնեց. «Չեմ կարծում, թե խորհրդարանն այն ամբիոնն է, որտեղ պետք է մանրամասներ քննարկել: Խնդրեմ, ովքեր պատրաստ են համագործակցության, մենք գործնական հարթություն կբերենք եւ կսկսենք գործնականում քննարկել»: Ա. Բախչյանը փորձեց ճշտել՝ խոսքը միայն կոչի՞ մասին է, թե ինչ-որ կոնկրետ բան: «Տիկին Բախչյան, ես երբեմ որեւէ մեկին առիթ չեմ տվել, որպեսզի մտածեն, թե ես ամբարտավությամբ եմ զբաղվում: Արդեն արձագանքներ կան ընդդիմության կողմից համագործակցելու, մենք արդեն այսօրվանից ախտասում եմք: Կցնի՞ ձեր արձագանքը՝ ձեզ հետ էլ կախտասենք հաճույքով», հավաստիացրեց վարչապետը:

Տես էջ 2

Հայտնաբերվել են զենք ու զինամթերք

Ձերբակալել են Վանո Սիրադեղյանի եղբորը

Ինչպես տեղեկացանք «Ֆորում» իրավունքի կենտրոնի նախագահ, փաստաբան Տիգրան Տեր-Եսայանից, փետրվարի 26-ի երեկոյան Տավուշի մարզի Կոթի գյուղում ձերբակալվել է Սերյոժա Սիրադեղյանը (Վանո Սիրադեղյանի եղբայրը): Վերջինիս տան խուզարկության ժամանակ հայտնաբերվել եւ առգրավվել է «ՏՕՁ» տեսակի հրացան առանց փամփուշտի, ինչը եւ հիմք է հանդիսացել ձերբակալման: Փաստաբանը տեղեկացրել է նաեւ, որ պարոնի զենք եւ զինամթերք պահելու կասկածանքով ձերբակալվել է նաեւ Նոյեմբերյանի բնակիչ Յուրա Մամյանը:

Երեքշաբթի օրը խուզարկություն է իրականացվել Ազգային անվտանգության ծառայության նախկին փոխնախարար Գուրգեն Եղիազարյանի տանը: Վերջինս հեռախոսազրույցում հայտնել է, որ իր ամառանոցի խուզարկության ժամանակ հայտնաբերել եւ առգրավել են, իր ասելով, զենք եւ դաշույնների ու թրերի հավաքածու: Խուզարկությունից հետո Գ. Եղիազարյանին բերման են ենթարկել, սակայն որոշ ժամանակ անց ազատ արձակել: Այդ օրը մեկ այլ խուզարկություն է իրականացվել ԵԿՄ Արաբկիրի տարածային կառույցի ղեկավար Հովհաննես Հարությունյանի տանը, որտեղ հայտնաբերվել ու առգրավվել են «SS» տեսակի ատրճանակ, «Մայզա» տեսակի երկու հրացան, փամփուշտներ, դաշույններ: Խուզարկությունից ժամեր անց Հ. Հարությունյանին այցելել են ԱԱԾ եւ ոստիկանության աշխատակիցները եւ ուղեկցել ԱԱԾ: Փաստաբանը խոսացավ նոր փաստեր տրամադրել:

ՄԱՐԻՆԵՍ ՄԱՐՏԻՐՅԱՆ

Լրագրողը քաղաքական գործիչ չէ

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Տրագիր ժամուի համար ծանր, չափազանց ծանր է նախագահական ընտրությունների նախընտրական ու հետընտրական շրջանը՝ հոդվածների տարափ, կարծիքների հակադրություն, հայհոյախառն նամակներ, գովեստի ու բողոքի հեռախոսազանգեր: Եվ անգամ համբերություն ու ողջամտություն է պետք հավասարակշռությունը պահելու եւ այդ ամենից մաքուր դուրս գալու համար: Ու որքան էլ ջանում ես հետեւել լրագրողական նորմերին ու չեզոք դիրք պահպանել՝ ընթերցողին մատուցելով այն ամենը, ինչի ունկնդիրը եւ ակնդիրն ես եղել, պարզվում է, որ հասարակության որոշ շերտեր բեզանից այլ սպասումներ ունեն, որ նրանց աչքին դու ոչ այլ ինչ ես, քան քաղաքական գործիչ, որը հարթակներ պիտի բարձրանա, բարձրախոսներ ձեռքն առնի, կոչեր ու ճիչեր արձակի իրենց թեկնածուի համար: Իսկ եթե խուսափում ես քաղաքական այս կամ այն բեւեռում գտնվելուց, ծայրահեղ կարծիքներ արտահայտելուց ու փորձում ես սթափություն ներշնչել հուզական լարվածության մեջ գտնվող մարդկանց, ուրեմն իբխանամետ ես, ծախված, ինքդ անդեմ, իսկ իբխանական թեւի համար՝ անվստահելի ես եւ անհասկանալի:



Ցավոք, այդ վիճակում հայտնվում են ոչ միայն չեզոք դիրք պահպանող լրագրողները, այլեւ հասարակության այն խոհեմ շերտը, որն իմաստագույն է համարում իբխանությանը կամ ընդդիմությանը հրաժարական հայհոյելը, որը չի տառապում հիշողության կորստով ու գործիք չի դառնում որեւէ կողմի ձեռքին:

Տես էջ 2

Ոստիկանությունը զգուշացնում է

Հայաստանի ոստիկանությունը հայտարարություն է տարածել, որ «արդեն յոթ օր է Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ նրա կողմնակիցները, չնայած բազմաթիվ զգուշացումներին, շարունակում են չարտոնված հանրահավաքները, երթերն ու նստացույցը: Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը ցուցարարներին կոչ է անում դադարեցնել պարտքի գործողությունները, չխախտել հասարակական կարգն ու քաղաքացիների անդորը եւ չկազմալուծել մայրաքաղաքի բնականոն կենսագործունեությունը»: Հաղորդագրության մեջ նշվում է, որ «ոստիկանությունը վճռական է եւ օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում պատասխանելու է երկրի սահմանադրական կարգն ու հասարակական անվտանգությունը»:

Կարապետիչը վիճարկում է

Սահմանադրական դատարանի ինստիտուտային կայքում տեղադրված հաղորդագրության համաձայն, Տիգրան Կարապետյանը դիմել է Հայաստանի Սահմանադրական դատարան: Հաղորդվում է, որ Նախագահի նախկին թեկնածուն վիճարկում է ԿԸՀ-ի փետրվարի 24-ի թիվ 24-Ա որոշումը:

Թուրքիան զորքերը դուրս չի բերի

Բաղդադում Թուրքիայի ներկայացուցիչ Ահմեդ Դավութօղլուն հայտարարել է, որ իր երկիրը Իրաքի հյուսիսային շրջաններից իր զորքերի դուրսբերման կոնկրետ ժամկետներ չի սահմանի, քանի դեռ չի վերացվել սպառնալիքը Իրաքի Քրդիստանի կողմից: Հաղորդվում է, որ Դավութօղլուն Բաղդադում բանակցություններ է անցկացրել Իրաքի արտաքին գործերի նախարար Խոշյար Զեբարիի հետ, թուրք-իրաքյան սահմանի ճգնաժամային իրադրության կարգավորման ուղիների որոնման մասին:

Մի՞թե արդեն արժանի ենք պատմության աղբարկղը նետվելու ...

Ուզենք, թե չուզենք, հետընտրական Հայաստանն արդեն իսկ տարբերվում է մի քանի ամիս առաջ եղած Հայաստանից: Մենք այսօր ունենք պառակտված եւ միմյանց դեմ տրամադրված ժողովուրդ, որն այլ բան, քան պետականության կորստի, բերել չի կարող: Սա ժողովրդավարություն չէ, հանգի ժողովրդավարական երկրներում փոխոռամասնությունը չի պարտադրում իր կամքը մեծամասնությանը, պետական հիմքերը ցնցող ուժերը պաշտպանության չեն արժանանում ընտրողների առնվազն մեկ հինգերորդի կողմից: Անգամ ժողովրդավարության հայրենիք Ֆրանսիայում, երբ ծայրահեղ ազգայնականների իշխանության հայտնվելու վտանգ առաջացավ, հասարակության բոլոր առողջ ուժերը համախմբվեցին եւ ինչ-որ տեղ անտեսելով ժողովրդավարական նորմերը, հանդես եկան ընդդեմ ազգայնականության հաղթանակի: Հայաստանի ներկայ իրավիճակն առավել վտանգավոր է, հանգի իշխանության են ձգտում՝ ադրազգային ուժերը, որոնք հանում իշխանության հասնելու չեն խնայում ոչ մեկին եւ կանգ չեն առնում միջոցների ընտրության միջեւ:

Նախկին Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, փաստորեն, ընտրել է հաղթական պայքարի եւ իշխանության զավթման բոլշեւիկյան մեթոդոլոգիան: Իր կողքին չկանգնող բոլոր ուժերին ու մարդկանց «տակնի» կամ «դավաճան» անվանելով, որը ոչ այլ ինչ է, քան բոլշեւիկյան «Ով մեզ հետ չէ, մեր դեմ է» կարգախոսը, մարդկանց «լեւոնականների» ու «սերժականների», դարաբաղցիների ու հայաստանցիների եւ բազում այլ մասերի պառակտելով ու միմյանց դեմ տրամադրելով, նախկին Նախագահը հանգում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ առաջ քաշած բոլշեւիկյան՝ «սեփական երկրի պարտության» գաղափարին: Եթե առա բոլշեւիկները Ռուսաստանի պարտության գաղափարն էին առաջ քաշում իրենց իշխանության գալու համար, իսկ 1919-20 թթ.-ին հայ բոլշեւիկները նույնը կրկնում էին Հայաստանում, արդա Լեւոն Տեր-Պետրոսյանը Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին զիջելու, Հայաստանն ու հայ ժողովրդին հերթական եւ արդեն անուղղելի պարտության մղելու միջոցով փորձում է լուծել իր իշխանության գալու հարցը: Ինչպես բոլշեւիկները իշխանության անցան պատերազմի ճանապարհով՝ հեղաշրջման միջոցով, նույն կերպ փորձում է իշխանությունը գրավել Հայաստանի նախկին Նախագահը: Դե, իսկ պիսակավորումների, կեղծիքի, սուտ տեղեկությունների եւ քարոզչական ու հոգեբանական այլ հնարների մասին, որոնք պարզապես զորաշարել են հասարակությունը, չենք խոսում, հանգի այդ մասին արդեն բազմիցս է ասվել մեր թերթում: Պարզապես նշենք, որ այս ամենը արվում էր նաեւ Ռուսաստանում ու Հայաստանում անցյալ դարասկզբին բոլշեւիկների կողմից: Իսկ սեւ ցուցակներ կազմելը, հարուածներին ուղեկցելը կամ բանս նստեցնելը բոլշեւիկների գործողությունների «թագն ու պսակն» էր, որը խոսանում են իրականացնել հայ իրականության մեջ այս բոլշեւիկները՝ Լեւոն Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ:

Անցյալ դարասկզբին Առաջին համաշխարհային պատերազմից հոգնած, բզկտված Ռուսաստանը փաստորեն ընկրկեց ամենեւին էլ մեծ ազդեցություն չունեցող բոլշեւիկների առջեւ: Թե դա ինչ ողբերգություն եղավ այդ եւ հետագայում ԽՍՀՄ կոչվող երկրում ապրող ժողովուրդների համար, կարիք չկա մեկ անգամ եւս ասելու: Սակայն կարիք կա նախազգուշացնելու մեր հասարակության բոլոր շերտերին այն վտանգի մասին, որը բերում են նախկին Նախագահը եւ նրան սատարող ուժերը: Նախ՝ վերջինիներս արժե հիշեցնել, որ նույն բոլշեւիկները, անցնելով իշխանության գլուխ, չխնայեցին այլ, անգամ դասընկից հաղթական ուժերին, արդա անցան արդեն սեփական շարքերը «զտելուն»: Ուշ չէ Լեւոն Տեր-Պետրոսյանին սատարող հաղթական ուժերին զգուշացնելու, որ երկրի նախկին Նախագահը նրանց դեմ է նետելու օգտագործված անձեռոցիկի նման: Սակայն մտահոգիչը դա չէ, հանգի տվյալ դեպքում այդ մարդիկ միանգամայն արժանի կլինեն հաղթական դիակ դառնալուն:

Ինչ մնում է մեզ բոլորիս, արդա ժամանակն է գիտակցելու այն չարիքը, որ բերեց մեզ Լեւոն Տեր-Պետրոսյանը, եւ համախմբելու ժողովրդի բոլոր առողջ ուժերը այդ չարիքի դեմ: Ժամանակն է, որպեսզի ինչի մեր մտավորականների՝ անհանդուրժողականությունը դասարարտող եւ իրեն իրենց ճիշտ անունով կոչող ձայնը, այլ ոչ թե փախվորած հայտարարությունները միայն օրերայի շրջակայքի աղտոտման մասին: Մի՞թե գրող Ալվարդ Պետրոսյանից բացի, ոչ ոք չի տեսնում այն ավերը, որ գործվում է հայ մարդկանց հոգիներում, մի՞թե միայն հոգեբան Կարինե Նալչաջյանն է տեսնում, որ այսրեղ է մեր վերջը գալու, մի՞թե մենք այնքան հոգնած ազգ ենք դարձել, որ արդեն արժանի ենք պատմության աղբարկղը նետվելու ...

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Վերաօծվեց վիրահայոց Սուրբ Փրկիչ եկեղեցին

Հայ առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի մամլո դիվանից տեղեկացնում են, որ փետրվարի 23-ին վերաօծվել է Թբիլիսիի շրջանի Սամսուղա գյուղի Սուրբ Փրկիչ եկեղեցին՝ ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ մասնակցությամբ Թբիլիսիի Սուրբ Գետերգ առաջնորդանիստ եկեղեցու հոգեւոր հովիվ Երիցե ավագ քահանա Հարությունյանի, Մառնեուլի եւ Բոլնիսի շրջանների հայության հոգեւոր հովիվ Հուսիկ քահանա Հարությունյանի, Թբիլիսիի Սբ. Գետերգ առաջնորդանիստ եկեղեցու դպրաց դասի: Սբ. Փրկիչը վերանորոգվել եւ բարեկարգվել է ծնունդով սամսուղցի, Ռուսաստանում բնակվող Գուրգեն Հովհաննիսյանի հովանավորությամբ:

Հավատացյալներին վերաօծման կարգի անդրանիկ պատարագը մատուցեց Հուսիկ քահանա Հարությունյանը, իսկ հավատի պատգամի քարոզ խոսեց թեմի առաջնորդ Վազգեն եպս. Միրզախանյանը: Վերաօծմանը Վրաստանում ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանի ողջույնի խոսքը փոխանցեց դեսպանի խորհրդական Եղիա Մանսուրյանը, իսկ Վրաստանի հայերի միության անունից ներկաներին ողջունեց Վրաստանի հայերի միության փոխնախագահ Վան Բալբուդյանը:

Թբիլիսիի շրջանի Սամսուղա գյուղի Սբ. Փրկիչ (Սբ. Աստվածածին) քարաշեն եկեղեցին կառուցվել է 1854-ին, ունեցել է հոգեւոր դպրաց, 40 ծուխ՝ 400 բնակիչներով: Գյուղից 500 մետր հեռու գտնվում է 18-րդ դարի Սբ. Աստվածածին ուխտատեղի քարաշեն մատուռը, իսկ մեկ այլ ուխտատեղի՝ Սբ. Գետերգ մատուռը գտնվում է գյուղի մյուս կողմում:

Գ. Գ.

Ընդդիմությունից արդեն արձագանքել են...

1-ին էջից

Իսկ ավելի ուշ լրագրողների հարցերին մեկ պատասխան ինչեցնելիս ավելացրեց, թե իր հանգրդակցության առաջարկին արդեն արձագանքել են եւ նախագահի թեկնածուներ, եւ արտախորհրդարանական ուժեր:

Այսպես հարցը կրկին ժառանգական Արմեն Մարտիրոսյանինն էր, որ խոսելով նախագահական ընտրություններում պատգամավորի հանդեպ կիրառված բռնության եւ, իր խոսքերով, «վերջին օրերին քաղաքական հետաքրքրությունների, ձերբակալությունների ենթարկված մի քանի գործիչների, քաղաքացիների եւ ուսանողների մասին», եւ որ՝ անօրինական զենք ունեցողները շատ են, բայց նրանց հանդեպ ընտրվի են օրենքը կիրառում, բորոտ հանդեպ օրենքի հավասար կիրառության մասին հարցրեց: Ս. Սարգսյանը հանձնարարեց պատգամավորի հետ այն առումով, որ շատ մեծ ջանքեր պետք է գործադրեն՝ վերացնելու պատճառները եւ պատգամավորների իրավական անգրագիտությունը, որը մեծ խնդիր է, եւ կոչ արեց պատգամավորին մասնակցելու այդ աշխատանքին: Եվ ասաց, թե չի հասկանում պատգամավորի բաժանումը՝ հասարակական գործիչ, ՀՀ քաղաքացի. «Ինձ համար ՀՀ բոլոր քաղաքացիները հավասար են»: Անօրինական զենքն էլ անօրինական զենք է՝ պատգամավորի, քաղաքական գործչի, ԵԿՄ անդամի մոտ գտնվի, թե հասարակ քաղաքացու. «Եվ այդ անօրինական զենքը միշտ առգրավվել է, ինձս դա ծանրները մեծանում են, եւ Ձեզ պիտի խոստանամ, որ մեր երկրում խաղաղ պիտի բացառենք անօրինական զենքի առկայությունը»: Արմեն Մարտիրոսյանի, Զարուհի Փոստանջյանի, Վարդան Խաչատրյանի հանդեպ՝ իրականացված բռնության մեղադրանքով հարուցված գործով էլ խոսացավ հետաքրքրվել, իսկ պատգամավորին էլ խորհուրդ տվեց իր ելույթը («պոպուլիստական» հուզեցին դահլիճի ՀՀԿ-ական շարքերից) ինչեցնել համապատասխան տեղում: Քաղաքական գործիչների ձերբակալությունների մասով. «Ինձ համար Գագիկ Ցիանգիրյանը քաղաքական գործիչ չէ, եթե Ձեզ համար քաղաքական գործիչ է՝ Դում՝ երիտասարդ քաղաքական գործիչ, կարող եք այդպիսի օրինակներով ոգեւորվել»: Արդեն անջատված խոսափողից առաջ գնալով եւ ամբիոնից իջած Ս. Սարգսյանին մոտենալով՝ Ա. Մարտիրոսյանը երեւի ասում էր, թե ո՞ր քաղաքական գործիչն է իրեն ոգեւորում, քանի որ ցույց էր տալիս դահլիճում նստած Ռաֆֆի Հովհաննիսյանի ուղղությամբ:

ԿՈՉ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՑ

Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի վարչության հայտարարությունը Հայաստանի նախագահական ընտրությունների առթիվ

Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիան (ՀՀԿ ԵԿԱ) իր շարքերում այսօր միավորում է տասնյակ երկրներում գործող բազմաթիվ հայկական երիտասարդական կազմակերպություններ, որոնք աջակցում են ազատասիրտ հայերի ջանքերի համախմբմանը համազգային շահերի շուրջը:

Ընթացիկ տարվա փետրվարի 19-ին Հայաստանում անցկացված նախագահական ընտրությունները եւս հիանալի առիթ հանդիսացան երիտասարդության համախմբման, երկրի առյուծի կերտման, հայրենանվեր գործում նրանց ակտիվ մասնակցության առահովման համար: Ակտիվ մասնակցելով ընտրություններին, երիտասարդներն իրենց նպաստը բերեցին Հայաստանում ժողովրդավարության ամրապնդմանը, հաղթական գործընթացների մասնակցության սեփական փորձառության կուտակմանը:

Ընտրությունների արդյունքում ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը ընտրվեց Հայաստանի Հանրապետության Նախագահ: Մենք շնորհավորում ենք նրան երկրի նախագահ ընտրվելու առթիվ եւ մեր զորակցությունն ենք հայտնում Հայաստանի Հանրապետության հզորացմանը, բնակչության բարեկեցության մակարդակի բարձրացմանը, երկրում համաձայնության եւ կայունության մթնոլորտի ստեղծմանը նպաստակմղված նրա նախընտրական ծրագրերի կենսագործման գործընթացներում:

Մինչդեռ այսօր մեզ մտահոգում են հետընտրական շրջանի զարգացումները, օրըստօրե խորացող հասարակական երկպառակությունները, միտինգային բեւեռացումները, առճակատումն, աղակայունացմանը տանող կոչերն ու գործողությունները:

Մենք ցավ ենք զգում, որ այդ զարգացումներում հաղթական որոշ ուժեր որպես գործիք փորձում են օգտագործել երիտասարդությանը, հատկապես ուսանող երիտասարդությանը, կոչ անելով նրանց դասադուլների եւ նստացույցերի եւ այսօրվան անհարիր այլ երեւույթների:

Ուստի մենք կոչ ենք անում երիտասարդությանը՝ չտրվել սադրանքների, ապրել, սովորել, գործել օրինականության շրջանակներում, առաջնորդվել պետական մտածողությամբ, համազգային հավաքական շահի գիտակցությամբ՝ ի նպաստ երկրի կայունության եւ հայոց պետականության անվտանգության:

Մենք դիմում ենք հասարակությանը երկպառակությունների, բեւեռացումների առաջնորդող բոլոր հաղթական եւ հասարակական ուժերին՝ սթափվել, որպեսզի հնարավոր լինի ծագած բոլոր խնդիրները լուծել՝ օրենքի եւ օրինականության սահմաններում:

Մենք դաստարարում ենք ընտրությունների ընթացքում տեղի ունեցած անօրինականություններ եւ ընտրակեղծիքներ իրականացնողների գործելաոճը եւ կոչ ենք անում իշխանություններին՝ նրանց ենթարկել խիստ պատասխանատվության:

Մենք վստահ ենք, մեր ժողովուրդը, երիտասարդության ակտիվ մասնակցությամբ, միահամուռ ջանքերով կհաղթահարի ներկայիս դժվարությունները եւ թե թեւի տված առաջ կշարժվենք երկրում կայունության, հաշտության ու համաձայնության ամրապնդման ուղիով:

Լրագրողը քաղաքական գործիչ չէ

1-ին էջից

Իբրեւ ասվածի ապացույց նշեմ, որ նախորդ օրը այդպիսի անախորժ վիճակում էր հայտնվել հոգեբան Կարինե Նալչաջյանը՝ «Հայացք» ակումբում, որի մեկնաբանությունները դժկամությամբ ընդունեցին որոշ լրագրողներ, հատկապես «Հայք» թերթի լրագրողը: Հոգեբանն այնքիսի անհարմարություն զգաց, որ հարկադրված եղավ ասել՝ «Կարծիք չստեղծվի, թե ինձ Սերժ Սարգսյանն է այստեղ ուղարկել»: Իսկ այդպիսի կարծիք ստեղծվելու պատճառն այն էր, որ, ըստ հոգեբանի վերլուծության, հասարակության վրա հոգեբանական հնարներ բանեցնելու Լեւոն Տեր-Պետրոսյանի իմացությունից պրոֆեսիոնալիզմի հոտ է գալիս, իսկ դրան հնարավոր է հասնել ոչ թե մեկերկու, այլ մոտ 10 տարվա ընթացքում: Իրենց թեկնածուի մասին ասվող ամեն մի բառի հանդեպ խիստ զգայուն լեւտնական թեւի լրագրողները հոգեբանից ճշտում էին պահանջում վերջինիս մասին նրա արտաբերած ամեն մի խոսքի համար: Երանի թե այդ բծախնդրությամբ նույն լրագրողները ծառայեին մեր հասարակությանը եւ իրենց ամենօրյա գործը չիամարեին իշխանական կամ լեւտնական թեւի համար մարտնչելը: Քաղաքական դաշտի պես լրագրվաճիջոցների հիմնական ասպարեզը բաժանվել է 2 բեւեռի եւ ամեն ինչ անում է տվյալ հաղթական ուժին գոհացնելու, սիրաշահելու համար: Մի կողմից իրական պատկերը անհեռատեսորեն սողոսկելու, Թաքնական հրապարակից համոզիչ տեսանյութեր ցուցադրելու փոխարեն ոստիկանության նկարահանած կադրերով մարդկանց «ահ ու սարսափ» ներշնչելու անհեղգ ջանքեր, մյուս կողմից՝ 30-50 հազարանոց հանրահավաքները 300-500 հազարանոց ներկայացնող, հեղաբերման ու հեղափոխության մասին հայտարարող զգայացունց հոդվածներ, նյութեր, լուրեր: Լրագրվաճիջոցների մասին խոսելիս այս օրերին մարդիկ հաճախ են ասում, որ հարդությունը սրելու մեջ նրանց դերակատարումը չափազանց մեծ է՝ հանրայինից մինչեւ U1+:

Լրատվություն սանձելու ցանկություն ունեցող հասարակ մարդուն այլ բան չի մնում, քան գնալ Թաքնարական հրապարակ եւ ամեն ինչ տեսնել սեփական աչքերով՝ ոգեւորվել կամ հիասթափվել այնտեղ հնչող ելույթներից, երգ ու պարից, ու դրանից հետո մեկընդմիշտ կորցնել վստահությունն ու հավատը լրագրողի եւ լրատվամիջոցի նկատմամբ:

Քաղաքական գործիչ դարձած մեր լրագրողներին բոլորովին այլ անկյունից են դիտում իրենց շուրջը կատարվող իրադարձություններին ինքնական հայացքով նայող մարդիկ: Նրանք, ովքեր կասկած իսկ չունեն, որ քաղաքական այս կամ այն թեւի համար մարտնչող լրագրողներն անպայման ունեն իրենց անձնական շահերը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 01 տարի
Ինքնագիր եւ հրատարակվում «ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան, 375010 Հանրապետության 47
Ֆաքս՝ 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր ՀԱՎԵՏ ԱԲԵՂՅԱՆ / հեռ. 521635
Խմբագիր ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՈՐԴԱՆ / հեռ. 529221
Գեղարվեստական (գրական) / հեռ. 582960
Լրագրողներ սենյակ / հեռ. 581841
Գովազդ. գնահատում / հեռ. 582483
Շուրջօրյա լրահոսավոր ծառայություն / հեռ. 529353
Գովազդային ծառայություն «Ազգ» թերթի
Թերթի էջերին անբողջական թե մասնակի արտադրումները տրպագիր ամբողջի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ առանց խմբագրության գրավոր հաստատության խստիվ արգելվում են
Հաստատված ՀՀ հեղինակային իրավունքի մասին օրենքի
Նիթերը չեն գրախոսվում ու չեն վերադարձվում
Գ տարով բաժանորդները գովազդային են, որոնց բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

«ՄԻՊ գրասենյակի արագ արձագանման խումբը ներկա է բոլոր հանրահավաքներում»

Արմեն Հարությունյանը միմյանց լսելու կոչ է անում

«Այսօր խորին համոզմունք ունեմ, որ մենք բոլորս ունենք մեկ թշնամի՝ անհանդուրժողականությունը եւ բեւեռացումը. բոլորս պետք է դա դեմ պայքարենք, որպեսզի այս բոլոր երեւույթները մեր հաղթական մեկուկիսից արտասախիլ լինեն: Կոչ եմ անում մեր բոլոր հաղթական գործիչներին, մեր բոլոր հաղթագիներին՝ մի պահ կանգ առնել եւ միմյանց լսել», երեկ «Ուրբաթ» ակումբում այսպիսի կոչով հանդես եկավ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը:

Արմեն Հարությունյանը լրագրողներին տեղեկացրեց, որ նախագահական ընտրությունների օրն իրենց գրասենյակ ուղարկված դիմում-բողոքների զգալի մասն անհիմն է եղել եւ նպաստակ է ունեցել հաղթական ֆոն ստեղծելու: Նա ասաց, որ դիմում-բողոքները ստանվել են եւ ուղարկվել համապատասխան մարմիններին, մի քանիսի հիման վրա հարուցվել են քրեական գործեր: Հարությունյանը նշեց նաեւ, որ խորհրդարանական ընտրությունների քվեարկության օրը ՄԻՊ գրասենյակը սպասել էր նույն ճանկությամբ բողոքներ, ինչ նախագահականի ժամանակ. «Մենք ունեցել ենք 24-25 կոնկրետ բողոքներ, եւ ավելի շատ ունենք չհիմնավորված բողոքներ: Մոտավորապես այսպես. «Եկեք, տեսեք, թե ինչ է կատարվում Աբովյանում... Մենք դրա հետեւից չէինք գնա, որովհետեւ հնարավոր էինք համարում, որ անհանդուրժողականության պայմաններում դա նաեւ քաղաքական տեխնոլոգիա է՝ ֆոն ստեղծելու համար: Զբաղվել ենք այն բողոքներով, որոնց մեջ կոնկրետություն է եղել»:

Ինչ վերաբերում է հանրային հեռուստաընկերությամբ իրականության ոչ ճիշտ լուսաբանմանը, օմբուդսմենը նկատեց. «Փակ ինֆորմացիան ավելի վտանգավոր է, քան ինֆորմացիայի ազատ լինելը: Ինչը որ արվում է՝ ճիշտ չէ՝ բայց երագրեր կան, որ բացասականը նշելով՝ նաեւ դրական տեղեկությունները պետք է նշել»:

Հարցին, թե հանրահավաքների ընթացքում խախտվել են մարդու իրավունքները՝ բռնի ուժով բերելու, խանգարելու տեսանկյունից, Հարությունյանը պատասխանեց. «Նմանատիպ խոսակցություններ շատ կան, բայց չունենք գրավոր այդպիսի բողոքներ, որ ասեն՝ հիմնավորված երեւույթ կա: Ինֆորմացիան էլ այսօր շատ բեւեռացված եւ ծայրահեղական է: Բացի այդ, վերջին վեց օրերի ընթացքում ՄԻՊ գրասենյակը որեւէ դիմում-բողոք չի ստացել Ազատության հրապարակի մերձակայքում ապրող քաղաքացիներից»:

Հարությունյանը հավելեց նաեւ, որ հանդիպում է ունեցել ԵԱՀԿ գործող նախագահի, դիտորդական խմբի ներկայացուցիչների հետ՝ քննարկելով, թե որքանով են հանրահավաքները խաղաղ, որքանով են օրենքի սահմաններում գործում: «Ընտրակաբաններ հետ կապված լուրջ անելիքներ ունենք: Սակայն դրանց մասին նույնպես գրավոր բողոք չի եղել», ընդգծեց պաշտպանը:

Դիվանագետների գործից ազատման հարցի հետ կապված Արմեն Հարությունյանը ասաց. «Կա հաղթագիական ծառայության օրենք: Սրա նպատակն է, երբ նախարարներ են փոխվում, հաղթական իշխանություն է փոխվում, ապարատի աշխատողները չփոխվեն, որովհետեւ նրանք պրոֆեսիոնալներ են, նրանք հաղթականությունից դուրս գտնվող մարդիկ են: Ապարատում աշխատող կողմը հաղթական կոչերի, հաղթական պրոցեսի մասնակից չպետք է դառնա: Կամ դու հաղթական գործիչ ես, կամ էլ ծառայող»:

Իսկ թե որքանով են համապատասխանում իրականությանը վերջին օրերին ձերբակալված անձանց խոշտանգումների մասին պատվող լուրերը, Հարությունյանը ասաց. «Ինֆորմացիա կար, որ Սմբատ Այվազյանին են խոշտանգումների ենթարկել: Անձնիջապես ես եմ նրա հետ խոսել եւ տեսել, որ այդպիսի բան չկա: Եվ նա հիմա փաստաբանով ապահովված է: Երեկ էլ Գուրգեն Եղիազարյանի հետ կապված ինֆորմացիա ստացանք. զբաղվելու ենք նրա բողոքով: Բողոքել է, որ իրեն 10 ժամ անօրինական պահել են, դրան պետք է պարզաբանում տվի»:

Արմեն Հարությունյանը նաեւ հայտնեց, որ ՄԻՊ գրասենյակի արագ արձագանման խումբը ներկա է գտնվում բոլոր հանրահավաքներում ոչ միայն իրավիճակին հետեւելու, այլեւ չմիջնորդավորված տեղեկություն ստանալու համար, քանի որ ՁԼՍ-ները շատ հաճախ հաղորդում են խեղաթյուրված, բեւեռացված տեղեկություններ:

ՆԱՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

Կիրականացվի ուսանողների իրավունքների հանրային պաշտպանի ծրագիր

«Գյումրու ուսանողական խորհուրդ» հասարակական կազմակերպությունը նախաձեռնել է «Ուսանողական օմբուդսմեն» ծրագիրը, որը ներկայացվեց ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբում հրավիրված մամուլի ասուլիսում: Ընթացիկ տարվա փետրվար-դեկտեմբեր ամիսներին անցկացվելիք ծրագրի նպատակը Գյումրիում ուսանողների իրավունքների հանրային պաշտպանի ինստիտուտի ներդրման միջոցով նրանց շահերի պաշտպանության լիարժեք համակարգի ստեղծումն է:

Սրան ուղղված ամբողջ աշխատանքը նախատեսվում է իրականացնել երեք փուլով: Ծրագրի համապատասխան ուսուցում անցած աշխատակազմը ուսանողական օմբուդսմենի պաշտոնի համար կհայտարարի մրցույթ, որին մասնակցելու համար դիմելու իրավունք կունենան շահերի պաշտպանության ոլորտում փորձառություն ունեցող անձինք: Թեկնածուներից մեկը սահմանված չափանիշների հիման վրա կընտրվի ուսանողների իրավունքների հանրային պաշտպան՝ օմբուդսմեն, եւ իր գործառույթները կիրականացնի մինչեւ ծրագրի ավարտը: Մինչ այդ թեկնածուներին հնարավորություն կընձեռվի իրականացնելու քառօրյա «նախընտրական ծրագիր» դասընթաց: Այս եւ «Ուսանողական օմբուդսմենի» գործունեության կանոնակարգի մշակման նպատակով կկազմակերպվեն կլոր սեղան-հանդիպումներ, հեռուստաֆնարկումներ, կազմակերպվեն պատասխաններ, բուկլետներ, որոնք կբաժանվեն Գյումրու բոլոր բուհերի ու դպրոցների ուսանողներին: Վերջիններս էլ կմասնակցեն ուսանողական հանրային պաշտպանի համաժողովային ընտրություններին: Ընտրված պաշտպանի, ծրագրի աշխատակազմի եւ հիշյալ ուսումնական հաստատությունների ռեկտորների հետ կազմակերպվելիք հանդիպման ժամանակ կհաստատվի համապատասխան կանոնակարգի նախագիծը, կհաստատվեն «Համաժողովային ուսանողական օմբուդսմենի» իրավասությունները եւ լիազորությունները: Վերջինս ծրագրի աշխատանքների հետ կենտրոնի իր աշխատակազմը, որում կընդգրկվեն ներկայացուցիչներ տարբեր բուհերից ու դպրոցներից՝ հետագա աշխատանքներն իրականացնելու համար: Տրված ծրագիր հարգչական նյութերի միջոցով հաղթի ուսանողությանը կներկայացվեն իրենց հանրային պաշտպանին դիմելու կարգը, նպատակները, խնդիրները, նրա լիազորությունների շրջանակները եւ մյուս անհրաժեշտ տվյալները: Բուհերում կտեղադրվեն արկղեր, որտեղ կկուտակվեն ուսանողների անանուն դիմում-բողոքները:

Նախատեսվում է նաեւ կազմակերպել հեռուստաֆնարկումներ, քանավեճեր բուհերում ուսանողների իրավունքների խախտումների եւ դրանց վերացման միջոցառումների թեմաներով: Կստեղծվի ինտերնետային կայք, այստեղ զետեղված կլինի տեղեկատվություն ծրագրի իրականացման ամբողջ ընթացքի, «Ուսանողական օմբուդսմենի» գործունեության, համապատասխան օրենքների եւ այլ հարցերի մասին, հետադարձ կապի միջոցով ուսանողները հնարավորություն կունենան ներկայացնելու իրենց դիմում-բողոքներն ու առաջարկությունները:

Գ. Մ.

ՕՐԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 11.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է Հայաստանի Հանրապետական կուսակցության մամուլի խոսնակ, Աժ պատգամավոր Էդուարդ Շարմազանովը:

◆Ժամը 12.00-ին «Ուրբաթ» ակումբը կհյուրընկալի հրապարակախոս Հայր Ուլուբաբյանին, որը եղել է նաեւ Սումգայիթի հայերի պաշտպանության հանձնախմբի ղեկավարը եւ Փասաբանների պալատի նախագահ Ռուբեն Սահակյանին, որը 1988 թվականին մասնակցել է Սումգայիթի դատավարությանը:

◆Նույն ժամին «Փասարակ» ակումբում կհյուրընկալվի սնտեսագետ Էդուարդ Աղաջանովը:

◆Ժամը 12.00-ին «Հայելի» ակումբի հյուրն է Տիգրան Կարապետյանը:

◆Ժամը 13.00-ին Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում տեղի կունենա միջոցառում՝ նվիրված Սումգայիթի հայկական ջարդերի զոհերի հիշատակին:

◆Ժամը 14.00-ին տեղի կունենա հավատական անվտանգության պայմանագիր կազմակերպության մամուլի կենտրոնի բացումը (Լենինգրադյան փողոց 6):

Նախագահական ընտրությունների շրջանում հարուցվել է 25 քրեական գործ

Ի՞նչ ընթացքում են շերտակալությունները ու հարուցված քրեական մյուս գործերը

«Այսօրվա դրությամբ հարուցվել է 25 քրեական գործ, որոնցից 12-ը հարուցվել է նախընտրական քարոզչության շրջանում արձանագրված միջադեպերի վերաբերյալ, երկու դեպքերը խուլիգանական են, մեկը՝ Արտաշատ, մյուսը՝ Թալինի դեպքը եւ մեկ ծեծի դեպք ունենք: Նախընտրական շրջանում, ի տարբերություն նախորդ ընտրության, այս անգամ շտաբների գույքերին վնաս պատճառելու դեպքեր չունենք արտահայտված հրազենի գործադրմամբ կամ հրկիզման միջոցով: Բուն ընտրությունների օրվա ընտրախախտումների վերաբերյալ հարուցվել է 13 քրեական գործ, որն առնչվում է ընտրական տեղամասերի հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների, լրագրողի աշխատանքին խոչընդոտելուն: Մեկ դեպք էլ ունենք քվեարկությունը կեղծելու վերաբերյալ: Այս հոդվածով հարուցվել է նաեւ երկրորդ քրեական գործը՝ ժամուլի հրապարակման հիման վրա: Շատ են եղել վարչական բողոքները, դասախոսությունը դրանց վերահսկողություն չի իրականացնում, ինչպես նաեւ եղել են կեղծ ահազանգեր», երեկ «Ազգի» հետ զրույցում նախընտրական եւ հետընտրական շրջանում արձանագրված քրեական գործերի մասին ասաց գլխավոր դատախազության մամուլի քարտուղար Սոնա Տուրզյանը:

Խորհրդարանական ընտրությունների ընթացքում հարուցվել է 17 քրեական գործ՝ ի տարբերություն նախագահական ընտրությունների, երբ հարուցվել է 25 քրեական գործ: Դատախազության մամուլի քարտուղարն այս ընտրություններում հարուցված գործերի ավելացման պատճառը վերագրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատակիցների աշխատանքին խանգարելու դեպքերի ավելացմանը. «Այդ ավելացումն, ըստ էության, եղել է ի հաշիվ տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքներին խոչընդոտելու դեպքերի»:

Բավական աղմուկ էր հանել թիվ 9/31 տեղամասում քվեարկության արդյունքները կեղծելու դեպքի առիթով հարուցված քրեական գործը, որի շրջանակներում ձերբակալվել էր հիշյալ ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյանը: Սոնա Տուրզյանի տեղեկացմամբ, այս գործով նախաքննությունն ավարտվել է, Էդուարդ Աղաջանյանին մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 150-դ հոդվածով՝ ընտրությունների կամ քվեարկության արդյունքների կեղծում, եւ գործն ուղարկվել է դատարան: Թալինում Լեւոն Տեր-Պետրոսյանի թիմակիցների կողմից Սարգիս Կարապետյանին ծեծի ենթարկելու առթիվ հարուցված քրեական գործը նախաքննության փուլում է: Մեկ այլ՝ Արտաշատի աղմկահարույց դեպքի առիթով, որի ժամանակ բռնության է ենթարկվել նաեւ առաջին նախագահի թիկնազորի ներկայացուցիչ Սարգիս Հովհաննիսյանը, մեղադրանք է առաջադրվել Արտաշատի բնակիչ Արմեն Միրզոյանին: Ընդ որում, դատախազության մամուլի քարտուղարը կրկին շեշտեց, որ դա Հովիկ Աբրահամյանի եղբոր տղան չէ, ինչի մասին լուրեր էին տարածվում: Սոնա Տուրզյանի խոսքով, բուն ընտրությունների օրվա դեպքերի առիթով հարուցված 13 քրեական գործերի թվում է հատուկ քննչական ծառայությունը՝ փորձելով հնարավորինս արագ ավարտել նախաքննությունը:

Փետրվարի 23-ին ձերբակալված դատախազի նախկին տեղակալ Գագիկ Ջհանգիրյանին երեկ մեղադրանք է առաջադրվել քրեական օրենսգրքի 235 հոդվածի առաջին մասով՝ «զենք-զինամթերք պահելը, փոխադրելը, կրելը», ինչպես նաեւ 316 հոդվածի առաջին մասով՝ «իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը»:

Սոնա Տուրզյանի խոսքով, Գագիկ Ջհանգիրյանն այն ժամանակ ինքն է կողմ եղել «27»-ի անջատված մասի վարույթը կարճելուն եւ 2004-ի նոյեմբերի 9-ի կոլեգիայի նիստում հայտարարել էր, որ կոլեգիայում պետք է քննարկվի ոչ թե անջատված մասի վարույթը կարճելու որոշման օրինականությունը, այլ մաս անջատելու որոշման օրինականությունը: Դատախազության մամուլի քարտուղարի խոսքով, Ջհանգիրյանը համարել է, որ մաս անջատելը չի որոշվել իրավական հարթությունում, քաղաքական նպատակ է ունեցել՝ քաղաքական իրավիճակը հանդարտեցնելու համար, ինչին այն ժամանակվա կոլեգիայի անդամներից Գեւորգ Դանիելյանը հակադարձել էր, թե առանց իրավական հիմքեր ունենալու մաս անջատելը ոչ թե քաղաքական իրավիճակը հանդարտեցրել, այլ հակառակը՝ սրել է. «Կոլեգիայի այդ նիստին, մասնակցել են բոլոր անդամները: Այդ նիստի արձանագրությունները պահվում են դատախազության արխիվում: Այդ նիստում Ջհանգիրյանին հարց է ուղղվել, թե կան գործով ապացույցներ, որոնք վկայում են, թե այս գործով կան կազմակերպիչներ, կան փաստաթղթեր, տեսաերիզներ, որոնք հիմք են տալիս ասելու՝ կան այլ հանցակիցներ, որոնք բացահայտված չեն եւ գործին կցված չեն, կան այդպիսի ապացույցներ, որոնք կցված չեն քրեական գործին: Ջհանգիրյանն ասել է, որ նման ապացույցներ գոյություն չունեն»:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՌԴ նախագահական ընտրության երկու ընտրատեղամաս Հայաստանում

Հայաստանում ՌԴ դեսպանությունից հայտնում են, որ մարտի 2-ին կայանալիք ՌԴ նախագահական ընտրություններին մասնակցելու համար ՀՀ-ում գտնվող Ռուսաստանի քաղաքացիները կարող են իրենց ընտրական իրավունքը իրացնել Գյումրիի Մարմարաշենի փողոց, տուն 1 հասցեում գտնվող թիվ 5020 ընտրատեղամասում կամ Երեւանում՝ Գր. Լուսավորչի փողոց, տուն 13/ա հասցեում գտնվող ՌԴ դեսպանատանը բացված թիվ 5015 ընտրատեղամասում: Անհրաժեշտ տեղեկություն կարելի է ստանալ 58 95 43 հեռախոսահամարով:

20-ոդ տարուց

Դա եղել է քսան տարի առաջ: ԽՍՀՄ-ում՝ մի երկրում, որտեղ օրը ցերեկով կատարված ցեղասպանության, ջարդերի, զանգվածային կոտորածների մասին տեղյակ էին միայն ոչնչության դասերից կամ հրանցիկ խոսակցություններից, հանկարծ հայտնի դարձավ, որ Ադրբեջանի մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Սումգայիթ ոչ մեծ քաղաքում վայրենիները ներխուժել են հայերի տները (նախապես ունենալով ոչ միայն հասցեները, այլեւ վաղօրոք նախապատրաստած մեծաղոտ մահակներ) եւ անողոք ոչնչացրել են, սպանել, բռնաբարել: Դա սկսվել էր փետրվարի 26-ի երեկոյան, շարունակվել 27-ի, 28-ի ողջ գիշերն ու ցերեկը եւ ավարտվել փետրվարի 29-ին, մութն ընկնելուն պես: Եվ այդ ամենը՝ միլիցիայի գիտությամբ, քաղաքի բնակիչների աչքի առջեւ:

Խորհրդային Միության համար դա իրոք անսովորության էր: Ակադեմիկոս Սախարովը հետո պետք է խոստովաներ. «Տեղեկանալով այդ մասին, մենք ահ ու դողի մեջ էինք»: Անդրեյ Դմիտրիեւիչը թերեւս առաջինն էր, որ կանխատեսեց ու մարգարեաբար գնահատեց իրավիճակի ողջ վտանգավորությունը, որը կարող էր ահեղի երկրում սկիզբ դնել հոգեհոր ու ջարդերի հրթայական հակազդեցության: Նա առաջինը դատապարտեց «սումգայիթը» կենտրոնական մամուլում՝ «Մոսկովսկիե Նովոստի» թերթում: Առաջինը հայտնեց այն տեսակետը, որ եթե տարարում էին, թե ադրբեջանցիները քաղաքը կառուցել են ադրբեջանցիների համար, իսկ այսօր այդ շինարարներն ապրում են ողորմելի բարաքներում: Այո, արդեն կարող էին ազատվել նրանցից, ովքեր 40-ականների վերջին եւ 50-ականների սկզբին դարաբաղյան գյուղերից եկել էին այն փոքրիկ բնակավայրը, որը գտնվում էր Բաքվից երեսուն կիլոմետր հեռու, Սումգայիթ գետի գետաբերանի մոտ:

Մինչեւ Հայրենական մեծ պատերազմը Սումգայիթում ապրում էր հինգ հազար մարդ: Եվ դժվար թե այն ժամանակ որեւէ մեկն իմանար, որ տասը տարի անց այդ բնակավայրն ընդգրկվելու էր «կոմունիզմի մեծ կառույցների» ցանկում: Մինչ այն, երբ Արցախում առաջին անգամ լսեցին Սումգայիթի մասին, ամենահայտնի «մեծ կառույցը» Մինգեչաուրի ՀԷԿ-ն էր: Պատերազմից անմիջապես հետո Բաքվից սկսեցին հաճախ Արցախ գալ անձինք, որոնց առաքելությունն էր երիտասարդությանը հրապուրել դեպի նոր աշխատանքային ճակատներ, կոչ անելով «մարտական մեդալներին» ավելացնել նաեւ «աշխատանքի մեդալներ»: Հայկական ինքնավար մարզի 150 հազար կազմող բնակչությունից 45 հազար մարդ էր մեկնել ռազմաճակատներ, որոնց կեսն ընկել էր ֆաշի մահով: Դարաբաղյան գյուղերում փետացուների անհավասարի պակաս կար: Ժողովրդագրական այդ ողբերգական խորությունների վրա, հետպատերազմյան սուլի պայմաններում շատ տղամարդիկ, այդ թվում՝ զորացրված ռազմաճակատայիններ ու անմորուս պատանիներ, սկսեցին ապրուստ վաստակելու համար մեկնել Մինգեչաուր եւ հետո էլ՝ Սումգայիթ:

Բնակչության հերթական մարդահամարը, որ տեղի ունեցավ 1959 թվականին, ցույց տվեց, որ գյուղը վերածվել է քաղաքի, որտեղ բնակվում էր արդեն 50 հազար մարդ, իսկ 1970 թվականի աճող մարդահամարի տվյալներով՝ 125 հազար: Թերթերը գրում էին, թե «Սումգայիթի շինարարների աշխատանքային լեզուն հայերենն է»: Հանրապետական «Օրվա նորություններով» մշտապես ցուցադրում էին սյուժեներ հայկական ընտանիքների ուրախ ու աղմկոտ բնակարանամուտների մասին: Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարները երկու նպատակ էին հետապնդում՝ կառուցել բուռն զարգացող քաղաք, որը շատ շուտով Բաքվից հետո երկրորդ տեղն էր գրավելու արդյունաբերական համալիրում, եւ աննկատ իրագործել Լեռնային Ղարաբաղի հայկական ինքնավար մարզի բնիկ բնակչության ամենախնայական եղանակ գտած:

1988 թվականի փետրվարի դրությամբ Սումգայիթում ապրում էր ավելի քան 20 հազար հայ: Ըստ երեւույթին նրանք բոլորն էլ ծնունդով Արցախից էին: Հավաքելով տարբեր խոսքերին եւ հեռաձայներին, թե իրենց համար «ապրելի քաղաք» են կառուցելու, հայերն իրենց նվիրաբերեցին Սումգայիթին: Իսկ 1988 թվականի փետրվարի 26-ին իրենց աչքերին ու ականջներին չէին հավատում, թե հայկական ջարդերն իրագործվում են պետական հաղորդակցության մակարդակով, հանգի ցույցերի մասնակիցների մեջ էին նաեւ հաղթի ղեկավարները: Եվ իհարկե, նրանց մտքով էլ չէր անցնի, որ սկիզբ առնող կոտորածի մասին, սթափ դատելով, տեղյակ էր նաեւ ինքը՝ Գորբաչովը:

Հենց փետրվարի 26-ին էր, որ Մոսկվայում, առավոտյան ժամը 10-ին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Միխայիլ Գորբաչովն Հին հրապարակի իր առանձնասենյակում ընդունեց Սիլվա Կաপուտիկյանին եւ ինձ՝ դարաբաղյան իրադարձությունների կատակցությամբ: Միութենական հանրապետությունից եկած գրողների ընդունելությունն այդման բարձր մակարդակով արդեն ինքնին աննախադեպ երեւույթ էր: Եվ տեղի ունեցավ այն հիմքով, որ դրա պատճառն ու առիթը նույնպես աննախադեպ էին: Կատակ բան չէ, արդեն երկու շաբաթ անընդմեջ բազմահազարանոց ցույցեր էին տեղի ունենում ԼՂԻՄ-ում եւ Հայաստանում: Իսկ Երեւանում ցուցարարների թիվը հասել էր կես միլիոնի: Թվում էր, թե աշխարհի հզորագույն տերություններից մեկի ղեկավարը պետք է մեզ լսելուց հետո հարց տար ինքն իրեն, թե ինչ անել, որպեսզի չձնշեն հուսահատության հասցված հայերին: Բայց դրա փոխարեն նա արտաբերեց. «Իսկ դրա մասին՝ թե Բաքվում ապրող 207 հազար հայերի ճակատագրի մասին»: Ես հասկացա, որ աշխատասենյակի տերը բոլորովին էլ պատահաբար չտվեց այդ կոնկրետ թիվը, չկլորացրեց, ասենք՝ «200 հազար»-ի: Ոչ, նրանց հենց 207 հազարը: Նման թիվն ամուր մատդիպվում է, եթե ինքդ ես կարդում: Անկասկած, Բաքվից սացված զրույցագրքում, բացի ամենայնից, ընդգծված էր եղել նաեւ շանսաժող միտքը, որ իրենց մայրաքաղաքում ապրում են 207 հազար հայեր, որոնց ադրբեջանցիները կկոտորեն:

1988 թվականի մարտի 2-ի վաղ առավոտյան Հայաստանի կոմկուսի կենտկոմ հրավիրեցին «մտավորականության մի քանի ներկայացուցիչներ»: Հեռախոսով հայտնել էին, թե մեզ հետ ցանկանում են հանդիպել հենց իր՝ Գորբաչովի կողմից գործուղված կուսակցական բարձրագույն աշխատողներ Դոլգիխը եւ Լուկյանովը: Հանդիպումը տեղի ունեցավ կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ղեմիրճյանի աշխատասենյակում: Առույգ, առանց նախաբանի իր խոսքն սկսեց քաղաքների անդամության թեկնածու, ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Դոլգիխը. «Դե ինչ, հասա՞ծ եք նպատակին: Երեկ չէ առաջին օրը Սումգայիթում սկսվել են անկարգություններ, որոնց հետեւանքով կան մարդկային զոհեր: Մոտ քսան մարդ սպանված են, տասներկուսը բռնաբարված: Հրկիզվել, թալանվել ու կողոպտվել են ավելի քան երկու հարյուր բնակարաններ: Վառվել են հարյուրավոր ավտոմեքենաներ, խանութներ, կրպակներ»:

Հանդիպմանը ներկա, դարաբաղյան շարժման ամենահեղինակավոր եւ ակտիվ գործիչներից մեկը՝ Իգոր Մուրադյանը ասաց. «Մեր ասածն էլ դա է: Չի կարելի ժողովրդի ճակատագիրը հանձնել անսանձ ու վայրի գազանների իշխանությանը, որոնք ունակ են միայն կոտորածների ու ցեղասպանության եւ ոչ թե խաղաղ ցույցերի՝ Գորբաչովի դիմանկարներով ու վերակառուցման կարգախոսներով: Ստեղծված իրավիճակում սխրված եք լինելու Ղարաբաղը վերցնել Մոսկվայի պատասխանության տակ»:

Նույն օրն իսկ սկսեցին երեսուն հասնել Սումգայիթի փախստականները: Երեկոյան մենք իմացանք 20-ոդ դարի հերթական ցեղասպանության բազմաթիվ մանրամասներ: 72 ժամ անընդմեջ, երեք օր ու գիշեր իրագործվել էր հայերի մի այնպիսի ցեղասպանություն, որպիսին 1915 թվականին, Օսմանյան կայսրությունում: Ոչնչացրել, ողջ-ողջ այրել, բռնաբարել ու թալանել էին բացառապես էթնիկական հատկանիշներից ելնելով: Իսկ ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղարը 1988 թվականի հուլիսի 18-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում ողջ երկրով մեկ հայտարարեց, թե «Սումգայիթի ողբերգությունը տեղի չէր ունենա, եթե զորքերը չուշանային երեք ժամով»:

Ինչի՞ վրա էր հույսը դրել Գորբաչովը, երբ այդքան բացորոշ ու անամոթաբար ստում էր: Իմ տածողության տակ է մի փաստաթղթի պատճենը՝ «Հույժ գաղտնի» վերնագրությամբ: Այն վերնագրված է՝ «ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի 1988 թվականի փետրվարի 29-ի նիստի ելույթների աշխատանքային արձանագրություն: Մեկ օրինակից»: Այդ նիստում քննարկվում է Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի խնդիրը: Միաժամանակ, այսպես ասած՝ հրնթացս, խոսակցություն է գնում Սումգայիթի մասին, որտեղ արդեն երրորդ օրը շարունակվում են ջարդերը: Բայց, դատելով ոեպլիկներից, քաղբյուրոյի անդամները, անդամության թեկնածուները, ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարները, որոնք իհարկե, լսել են սումգայիթյան սպանդի մասին, դեռեւս իրավիճակի տերը չեն: Եվ այնքան գլխավոր քարտուղար Գորբաչովը, իրեն դնելով ոլորտեսիոնալ իրավաբանի տեղ, որը լավ գիտե, որ «Ասված մանրամասն

Հրդեհ ու զարհուրելի

Որոնցում քաղված են և՛ միջազգային իրավագիտությունը, և՛ միջազգային արդարադատությունը, և՛ պետական կառավարման կանոնները, և՛ աշխարհակարգի կանոնները մեր մոլորակի վրա

ՁՈՐԻ ՔԱԼԱՅԱՆ

Կոեմը ոչ միայն իրավաբանական, այլեւ քաղաքական գնահատական չտա «սումգայիթին», ապա հանրընդհանուր դժբախտության փոխված այդ անկասելի աղետն անպատճառ կիանգեցնի ԽՍՀՄ-ի փլուզմանը:

Ավաղ, Անդրեյ Դմիտրիեւիչի խոսքերն իրոք մարգարեական դուրս եկան: Ամում էր մի սերունդ, որը գործնականում ոչինչ չգիտեր անպատիժ կերպով մարդկության դեմ գործած հանցագործության մասին: Չէ՞ որ «սումգայիթյան» անպատժելիությունը երկու տարի անց բերեց ավելի հրեշավոր հանցագործության, այս անգամ արդեն Բաքվում, եւ հետո էլ դաժան, լայնածավալ պատերազմի Ադրբեջանի ու Ղարաբաղի միջեւ: Մեզանից յուրաքանչյուրի սրտում մնացին միայն անմեղ զոհերի հիշատակը եւ հայ ժողովրդի անամոթ ողբերգությունը:

Ի լրումն ամենի, ադրբեջանցիները՝ Սումգայիթի եւ Բաքվի դահիճներին դատելով սրբերի շարք, այսօր գլխիվայր շրջելով պատմական փաստերը, ազգային հերոսի աստիճանին են բարձրացել այն երիտասարդ սպային, որը Բուդաপեշտում, կացինը ձեռին գիշերով նիրխուժեց իր ննջած գործընկերոջ սենյակ եւ կտրեց նրա գլուխը միայն այն պատճառով, որ վերջինս հայ էր: Հոգեբանների կարծիքով՝ կացինը մարդասպանի ձեռին էր դրել անպատիժ մնացած Սումգայիթը: Եվ նույնը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ գործում կերպով չենք գիտակցել, որ զոհերը ոչ թե վրիժառության են ծառայ, այլ օրենքի հաղթանակի: Ճիշտ էր Սախարովը, երբ 88 թվականին այցելելով Ղարաբաղ, ասաց. «Դեռ հայտնի չէ, թե ավելի շատ ով է զոհը. նրանք, ում սպանեցին, թե՞ նրանք, ովքեր սպանում էին»:

* * *

Սումգայիթում հայկական ջարդերի անմոռաց կոչեր սկսեցին հնչել 1988 թվականի փետրվարի 26-ի երեկոյան: Օրն ուրաքաղ էր: Միայն հետագայում էինք իմանալու, որ Ադրբեջանում հայերի դեմ բոլոր այդունալի գործողությունները ծրագրվում էին բացառապես շաբաթվա վերջին օրերին: Դա արվում էր նրա համար, որ մեր գանգերը չհասնեին երկրի ղեկավարներին, որոնք, որպես կանոն, արդեն ուրբաթ երեկոյան մեկնում էին իրենց ամառանոցներ: Ի դեմ, հետագայում բոլոր խոշորածավալ գործողությունները, ելնելով «սումգայիթյան» փորձից, Ադրբեջանի ղեկավարությունը ծրագրում եւ իրագործում էր միմիայն կուսակցական եւ խորհրդային իշխանությունների գիտությամբ: Հենց ողբերգական իրադարձությունների նախօրեին էր, որ նոր ցեղասպանության կազմակերպիչներն ու գաղափարախոսները, բացի այլ, զուտ ազգայնամոլական կարգախոսներից, բարձրաձայն գոռում էին. «Հայեր, հեռացեք ձեր խորունկ Հայաստան», «Մարեցնե՛ Սումգայիթը հայերից»: Հեռատեսները հայտարարում էին, թե ադրբեջանցիները քաղաքը կառուցել են ադրբեջանցիների համար, իսկ այսօր այդ շինարարներն ապրում են ողորմելի բարաքներում: Այո, արդեն կարող էին ազատվել նրանցից, ովքեր 40-ականների վերջին եւ 50-ականների սկզբին դարաբաղյան գյուղերից եկել էին այն փոքրիկ բնակավայրը, որը գտնվում էր Բաքվից երեսուն կիլոմետր հեռու, Սումգայիթ գետի գետաբերանի մոտ:

Մինչեւ Հայրենական մեծ պատերազմը Սումգայիթում ապրում էր հինգ հազար մարդ: Եվ դժվար թե այն ժամանակ որեւէ մեկն իմանար, որ տասը տարի անց այդ բնակավայրն ընդգրկվելու էր «կոմունիզմի մեծ կառույցների» ցանկում: Մինչ այն, երբ Արցախում առաջին անգամ լսեցին Սումգայիթի մասին, ամենահայտնի «մեծ կառույցը» Մինգեչաուրի ՀԷԿ-ն էր: Պատերազմից անմիջապես հետո Բաքվից սկսեցին հաճախ Արցախ գալ անձինք, որոնց առաքելությունն էր երիտասարդությանը հրապուրել դեպի նոր աշխատանքային ճակատներ, կոչ անելով «մարտական մեդալներին» ավելացնել նաեւ «աշխատանքի մեդալներ»: Հայկական ինքնավար մարզի 150 հազար կազմող բնակչությունից 45 հազար մարդ էր մեկնել ռազմաճակատներ, որոնց կեսն ընկել էր ֆաշի մահով: Դարաբաղյան գյուղերում փետացուների անհավասարի պակաս կար: Ժողովրդագրական այդ ողբերգական խորությունների վրա, հետպատերազմյան սուլի պայմաններում շատ տղամարդիկ, այդ թվում՝ զորացրված ռազմաճակատայիններ ու անմորուս պատանիներ, սկսեցին ապրուստ վաստակելու համար մեկնել Մինգեչաուր եւ հետո էլ՝ Սումգայիթ:

Բնակչության հերթական մարդահամարը, որ տեղի ունեցավ 1959 թվականին, ցույց տվեց, որ գյուղը վերածվել է քաղաքի, որտեղ բնակվում էր արդեն 50 հազար մարդ, իսկ 1970 թվականի աճող մարդահամարի տվյալներով՝ 125 հազար: Թերթերը գրում էին, թե «Սումգայիթի շինարարների աշխատանքային լեզուն հայերենն է»: Հանրապետական «Օրվա նորություններով» մշտապես ցուցադրում էին սյուժեներ հայկական ընտանիքների ուրախ ու աղմկոտ բնակարանամուտների մասին: Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարները երկու նպատակ էին հետապնդում՝ կառուցել բուռն զարգացող քաղաք, որը շատ շուտով Բաքվից հետո երկրորդ տեղն էր գրավելու արդյունաբերական համալիրում, եւ աննկատ իրագործել Լեռնային Ղարաբաղի հայկական ինքնավար մարզի բնիկ բնակչության ամենախնայական եղանակ գտած:

1988 թվականի փետրվարի դրությամբ Սումգայիթում ապրում էր ավելի քան 20 հազար հայ: Ըստ երեւույթին նրանք բոլորն էլ ծնունդով Արցախից էին: Հավաքելով տարբեր խոսքերին եւ հեռաձայներին, թե իրենց համար «ապրելի քաղաք» են կառուցելու, հայերն իրենց նվիրաբերեցին Սումգայիթին: Իսկ 1988 թվականի փետրվարի 26-ին իրենց աչքերին ու ականջներին չէին հավատում, թե հայկական ջարդերն իրագործվում են պետական հաղորդակցության մակարդակով, հանգի ցույցերի մասնակիցների մեջ էին նաեւ հաղթի ղեկավարները: Եվ իհարկե, նրանց մտքով էլ չէր անցնի, որ սկիզբ առնող կոտորածի մասին, սթափ դատելով, տեղյակ էր նաեւ ինքը՝ Գորբաչովը:

Հենց փետրվարի 26-ին էր, որ Մոսկվայում, առավոտյան ժամը 10-ին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Միխայիլ Գորբաչովն Հին հրապարակի իր առանձնասենյակում ընդունեց Սիլվա Կաপուտիկյանին եւ ինձ՝ դարաբաղյան իրադարձությունների կատակցությամբ: Միութենական հանրապետությունից եկած գրողների ընդունելությունն այդման բարձր մակարդակով արդեն ինքնին աննախադեպ երեւույթ էր: Եվ տեղի ունեցավ այն հիմքով, որ դրա պատճառն ու առիթը նույնպես աննախադեպ էին: Կատակ բան չէ, արդեն երկու շաբաթ անընդմեջ բազմահազարանոց ցույցեր էին տեղի ունենում ԼՂԻՄ-ում եւ Հայաստանում: Իսկ Երեւանում ցուցարարների թիվը հասել էր կես միլիոնի: Թվում էր, թե աշխարհի հզորագույն տերություններից մեկի ղեկավարը պետք է մեզ լսելուց հետո հարց տար ինքն իրեն, թե ինչ անել, որպեսզի չձնշեն հուսահատության հասցված հայերին: Բայց դրա փոխարեն նա արտաբերեց. «Իսկ դրա մասին՝ թե Բաքվում ապրող 207 հազար հայերի ճակատագրի մասին»: Ես հասկացա, որ աշխատասենյակի տերը բոլորովին էլ պատահաբար չտվեց այդ կոնկրետ թիվը, չկլորացրեց, ասենք՝ «200 հազար»-ի: Ոչ, նրանց հենց 207 հազարը: Նման թիվն ամուր մատդիպվում է, եթե ինքդ ես կարդում: Անկասկած, Բաքվից սացված զրույցագրքում, բացի ամենայնից, ընդգծված էր եղել նաեւ շանսաժող միտքը, որ իրենց մայրաքաղաքում ապրում են 207 հազար հայեր, որոնց ադրբեջանցիները կկոտորեն:

1988 թվականի մարտի 2-ի վաղ առավոտյան Հայաստանի կոմկուսի կենտկոմ հրավիրեցին «մտավորականության մի քանի ներկայացուցիչներ»: Հեռախոսով հայտնել էին, թե մեզ հետ ցանկանում են հանդիպել հենց իր՝ Գորբաչովի կողմից գործուղված կուսակցական բարձրագույն աշխատողներ Դոլգիխը եւ Լուկյանովը: Հանդիպումը տեղի ունեցավ կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ղեմիրճյանի աշխատասենյակում: Առույգ, առանց նախաբանի իր խոսքն սկսեց քաղաքների անդամության թեկնածու, ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Դոլգիխը. «Դե ինչ, հասա՞ծ եք նպատակին: Երեկ չէ առաջին օրը Սումգայիթում սկսվել են անկարգություններ, որոնց հետեւանքով կան մարդկային զոհեր: Մոտ քսան մարդ սպանված են, տասներկուսը բռնաբարված: Հրկիզվել, թալանվել ու կողոպտվել են ավելի քան երկու հարյուր բնակարաններ: Վառվել են հարյուրավոր ավտոմեքենաներ, խանութներ, կրպակներ»:

Հանդիպմանը ներկա, դարաբաղյան շարժման ամենահեղինակավոր եւ ակտիվ գործիչներից մեկը՝ Իգոր Մուրադյանը ասաց. «Մեր ասածն էլ դա է: Չի կարելի ժողովրդի ճակատագիրը հանձնել անսանձ ու վայրի գազանների իշխանությանը, որոնք ունակ են միայն կոտորածների ու ցեղասպանության եւ ոչ թե խաղաղ ցույցերի՝ Գորբաչովի դիմանկարներով ու վերակառուցման կարգախոսներով: Ստեղծված իրավիճակում սխրված եք լինելու Ղարաբաղը վերցնել Մոսկվայի պատասխանության տակ»:

Նույն օրն իսկ սկսեցին երեսուն հասնել Սումգայիթի փախստականները: Երեկոյան մենք իմացանք 20-ոդ դարի հերթական ցեղասպանության բազմաթիվ մանրամասներ: 72 ժամ անընդմեջ, երեք օր ու գիշեր իրագործվել էր հայերի մի այնպիսի ցեղասպանություն, որպիսին 1915 թվականին, Օսմանյան կայսրությունում: Ոչնչացրել, ողջ-ողջ այրել, բռնաբարել ու թալանել էին բացառապես էթնիկական հատկանիշներից ելնելով: Իսկ ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղարը 1988 թվականի հուլիսի 18-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում ողջ երկրով մեկ հայտարարեց, թե «Սումգայիթի ողբերգությունը տեղի չէր ունենա, եթե զորքերը չուշանային երեք ժամով»:

Ինչի՞ վրա էր հույսը դրել Գորբաչովը, երբ այդքան բացորոշ ու անամոթաբար ստում էր: Իմ տածողության տակ է մի փաստաթղթի պատճենը՝ «Հույժ գաղտնի» վերնագրությամբ: Այն վերնագրված է՝ «ԽՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի 1988 թվականի փետրվարի 29-ի նիստի ելույթների աշխատանքային արձանագրություն: Մեկ օրինակից»: Այդ նիստում քննարկվում է Լեռնային Ղարաբաղի եւ Նախիջեւանի խնդիրը: Միաժամանակ, այսպես ասած՝ հրնթացս, խոսակցություն է գնում Սումգայիթի մասին, որտեղ արդեն երրորդ օրը շարունակվում են ջարդերը: Բայց, դատելով ոեպլիկներից, քաղբյուրոյի անդամները, անդամության թեկնածուները, ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարները, որոնք իհարկե, լսել են սումգայիթյան սպանդի մասին, դեռեւս իրավիճակի տերը չեն: Եվ այնքան գլխավոր քարտուղար Գորբաչովը, իրեն դնելով ոլորտեսիոնալ իրավաբանի տեղ, որը լավ գիտե, որ «Ասված մանրամասն

20-ոդ տարուից

վան մասին: Դրանց մի մասը լուցված են ռուսերեն տեխստով՝ մահվան բժշկական վկայականների բլանկների վրա, մի մասն էլ՝ ռուսերեն եւ ադրբեջաներեն: Բոլոր ախտորոշումները գործնականում նույնն են. «Գանգուկրեի բեկորային ջարդվածքներ, որովայնի կտրված-ծակված վերքեր, այրվածքներ»: Այդպիսի ախտորոշումներ են տրված բոլոր հինգ Մելիումյաններին, որոնք բնակվել են Սումգայիթի 42ա թաղամասի 26-րդ շենքի 21-րդ բնակարանում: Հայրը՝ Սողոմոն Մարգարի Մելիումյանը, ծնված 1931 թվականին, մայրը՝ Ռայիսան, ծնված 1934 թվականին, որդին՝ Իգորը (1957 թ.), որդին՝ Էդուարդը (1960 թ.), դուստրը՝ Իրինան (1961 թ.): Սումգայիթում, Վոռոնեժում, Մոսկվայում անցած դատաքննությունների ընթացքում վկաները ցուցմունքներ են տվել, որոնց համաձայն բոլոր հինգ Մելիումյաններին էլ, ծեծից ու ծանակոտումներից հետո, ողջ-ողջ այրել են ոտքերի փողոցում:

Նարմի Լեռնային Ղարաբաղի Հադրութի շրջանի Ձիլան փոքրիկ գյուղից էին: Մեր ազգականներ չունեին ոչ հայրենի Արցախում, ոչ էլ Սումգայիթում: Այդպես 1988 թվականի փետրվարի 29-ին անհետացավ մի ողջ տոհմ: Նարմի վերջին զոհվածներից էին: Գուցե իրոք լուրերի ճիշտ էր Գորբաչովը. եթե զոհը երեք-չորս տարեկան լիներ, կփրկվեին եղբայրներ Վալերի եւ Այբերս Ավանեսյանները, հայր ու որդի Սոմո եւ Արթուր Առաքելյանները եւ շատ ուրիշներ: Ի դեմ, Առաքելյանները, որ ծնունդով արցախյան Քյաթուկ գյուղից էին, իմ ազգականներն էին մորս գծով: Մեզ այն ժամանակ հաջողվեց նրանց մարմինները տեղափոխել Արցախ եւ թաղել Քյաթուկի գերեզմանոցում, պարիս կողքին:

Ականատեսները պատմում են, որ անոյաժելիությունը մարդասպաններին ժամ առ ժամ ավելի լիրբ ու համարձակ էր դարձնում: Պատահական չէ, որ զոհերի ու ջարդերի մեծ մասը բաժին ընկավ չորրորդ օրվան՝ փետրվարի 29-ին: Եթե Տուլայի օդադեսանային դիվիզիայի Ռյազանի 137-րդ գունդը վերջապես չհասներ Սումգայիթ, արդա զոհերի թիվն անհամար կաներ: Գնդապետ Ալեքսանդր Լեբեդը, որը մարտին ընդունեց դիվիզիայի հրամանատարությունը, Սումգայիթ ժամանեց այն ժամանակ, երբ դեռ օրում կանգնած էր խանձահոտը:

Իր «За державу обидно» գրքում Լեբեդը գրում է. «Այն ժամանակ՝ 1988 թվականի փետրվար-մարտ ամիսներին սկսվեց գրվել անկանխատեսելի, անսպասելի, վայրի, տեղ-տեղ՝ արյունոտ, տեղ-տեղ էլ ծայրահեղ սեռ մի էջ թե՛ ՕԴՀ-ի պատմության, թե՛ հայրենիքի պատմության եւ թե՛ իմ անձնական կենսագրության մեջ: Ամենացավալին այն էր, որ դեռության մեջ բարձրագույն պատգամներ զրաղեցնող մարդկանցից էին գալիս սեռությունը, անմարդությունը, միջոցների միջեւ խտրականություն չդնելը: Նարմի այնտեղ, վերեւում հետաքրքրում էին սեփական ինչ-որ ռազմավարական նպատակներ, խարդավանքների դիմում, կնքում գործարքներ, այդ թվում նաեւ սասանայի հետ, իսկ ներքեւում նրանց կամքով ու գիտությամբ, նրանց ակտիվ մասնակցությամբ կամ կանխամտածված պասիվությամբ կատարվում էր ժողովուրդների հրահրում, ծավալվում ու աճում էր արյունոտ անօրենությունը, հիմքեր էին դրվում (եթե կարելի է դրանք հիմքեր անվանել) մեծ դեռության փլուզման ու կործանման համար... Աֆղանստանից հետո առաջին անգամ Սումգայիթում, իմ հարազատ հողում (այն ժամանակ այդպես էի ընդունում) ես տեսա հրկիզված բեռնատարներ ու ավտոբուսներ, այրվող տներ, ինչ-որ ժամանակ բնակից սեւ, բայց մարդկանց վերադրած սարսափից ճերմակած մազեր եւ աչքեր՝, աչքեր՝... Եվ այդ ժամանակ էլ առա միջնադարյան սադիզմի, գազանային, անմարդային դաժանության հոտը, խիտ միահյուսված հիմարության հետ...»:

Թվում էր, թե Սումգայիթն իր ողջ էությամբ դեռք է բացեր վերակառուցման նախաձեռնող Գորբաչովի աչքերը, որի ձեռքին էին ե՛ւ իրական իշխանությունը (եթե չասենք՝ անսահմանափակ), ե՛ւ դրա կիրառման կոնկրետ մեխանիզմները՝ ոչ միայն վճռականորեն դաժանելու չարիքը, այլեւ այն ժամանակվա համար լավագույն լուծումը տալու դարաբաղյան եւ նախիջեւանյան խնդիրներին: Հանում առարության դեռք է ասել, որ փետրվարի 29-ի հաղթարշավի վերը հիշատակված նիստում Միխայիլ Գորբաչովը բավական հանգամանորեն խոսեց Նախիջեւանի Հայկական Ինքնավար Հանրապետության ծայրագույնս սրված խնդրի մասին. «Ես հարցրեցի Վիկտոր Միխայլովիչին (Չեբրիկով, ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ-Զ.Բ.), ինչ ես արել այնտեղ սահմանային գծի հետ: Իսկ նա պատասխանեց, թե Նախիջեւանում, որտեղով անցնում է սահմանը, սահմանապահները ունեն իրենց գիծը, որտեղ տեղադրված են ուղեկալները: Իսկ սահմանային գոտու ողջ խորությունը սահմանում են տեղական մարմինները, տվյալ դեպքում՝ հանրապետական (ադրբեջանական-Զ.Բ.)»: Եվ ինչ որ տում ընդունվեց: Ողջ Նախիջեւանը մցվեց սահմանամեջ գոտու տակ: Ազատ մուտքն այնտեղ արգելվեց: Իսկ չէ՞ որ այնտեղ էին թաղված ցեղասպանության զոհեր: Այնտեղ էին գտնվում նրանց գերեզմանները: Այնտեղ էին գտնվում հայկական մշակույթի 90 հուշարձաններ, որոնցից մեկը մնաց: Եվ վերջ: Ոչ մեկին չեն թողնում այն դատարկով, թե դա սահմանային գոտի է:

Սումգայիթյան ջարդերին հաջորդած առաջին օրերին Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարությունը շոկի մեջ էր: Տրամաբանորեն սպասում էին գոնե ինչ-որ հաղթական գնահատականի՝ կազմակերպչական եւ իրավաբանական եզրահանգումներով: Սակայն բառացիորեն մեկ օր անց, կենտրոնական թերթերը, ասես դայմանավորված, սկսեցին գրել բացառապես «Լեռնային Ղարաբաղի եւ նրա շուրջ իրադարձությունների մասին»: Ավելի շատ գրում էին ժողովուրդների բարեկամության

մասին: Կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրեցին մի ուրախ հարսանիք, որտեղ փեսան ադրբեջանցի էր, հարսը՝ հայուհի: «Նորադարձ» դեռասանները խցիկի առջեւ բղավում, ինտերնացիոնալիստական ճառեր արտասանեցին: Հանցագործության հետքերը ջնջելու գործում առանձնակի եռանդ հանդես բերեց ԽՍՀՄ դատախազությունը: Ավելի ու ավելի հաճախ էին կրկնում. «Զոհերը տարբեր ազգությունների ներկայացուցիչներ էին»: Ջանգվածային տպանությունների օրը «Կոմունիստ Սումգայիտա» թերթի (1988 թ. փետրվարի 28-ի համարի) առաջնորդող հոդվածում գրում էին. «Սումգայիթցիների, ինչպես եւ մեր հանրապետության ողջ աշխատավորության շրջանում ջերմ արձագանք գտավ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Գորբաչովի դիմումը Ադրբեջանի եւ Հայաստանի ժողովուրդներին: Միխայիլ Գորբաչովի դիմումը հաղորդելուց բառացիորեն մի քանի ժամ անց խմբագրություն սկսեցին այցելել տարբեր ազգերի ներկայացուցիչներ...»: Այս փաթեթիությունն ու ցինիզմը շարունակվեցին հաջորդող բոլոր օրերի ընթացքում: Իսկ 1988 թվականի մարտի 4-ին նույն թերթը տեղեկատվություն տպագրեց, որ «ստեղծվել է կառավարական հանձնաժողով՝ Ադրբեջանական ԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ Սեիդովի գլխավորությամբ: Լուծվում են բոլոր հարցերը, կարված... բնակելի եւ հասարակական շենքերի վերանորոգման հետ: Ահա թե ինչպիսի «բոլոր հարցեր» էին լուծվում այն ժամանակ, երբ հաղթի աստիճանի վրա դեռ չէր չորացել անմեղ զոհերի արյունը:

Բաքվի կուսակցական եւ կոմերիտական թերթերում տպագրվում էին հոդվածներ, որոնցում ստեղծվում էր հայի կերպարը՝ որպես Ադրբեջանի դեմ թշնամու: Իսկ սպանոցը կազմակերպողներին վերագրվում էր այն մեղքը, թե «Սումգայիթը փոխվել էր էկոլոգիական դժոխքի»: Եվ արդեն ամբողջովին սանձազերծվեցին, երբ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում Գորբաչովը, հասարակամորեն մերժելով «ցեղասպանություն» տերմինի կիրառումը Սումգայիթի մասին, ողջ երկրով մեկ հայտարարեց. «Ցեղասպանությունը կազմակերպված հանցագործություն է: Իսկ Սումգայիթում գործել են ընդամենը հասարակության թափթփուկներ»: Եվ սա ասում է այն դեռության ղեկավարը, որը ստորագրել է ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ դրա համար դատի կրելու մասին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած համաձայնագիրը: Բայց չէ՞ որ համաձայնագրում ընդգծված է. «Ցեղասպանության տակ հասկացվում են հետեւյալ գործողությունները, որոնք կատարվում են որեւէ ազգային, ռասայական կամ կրոնական խումբ որպես այդպիսին լիովին կամ մասամբ ոչնչացնելու նպատակով. նման խմբերի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր խանգարումներ պատճառելը»:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահը որպես փաստարկ բերեց նաեւ զոհերի թիվը: Մինչդեռ, համաձայն Գլխավոր ասամբլեայի հայտարարության, «ճանաչական բնութագիրը որոշիչ չէ ցեղասպանություն հանցագործության պարագայում: Ցեղասպանություն է համարվում ազգային խմբի մի քանի ներկայացուցիչների սպանությունը, եթե սպանությունը կատարված է տվյալ ազգային խումբը որպես այդպիսին ոչնչացնելու նպատակով»:

Պատահական չէր, որ կենտրոնական հեռուստատեսությամբ ցուցադրված ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության այդ տխրահռչակ նիստից հետո սկսեցին հայտնվել հարարակումներ, որոնցում բոլոր մահացու մեղքերը վերագրվում էին հենց զոհերին: Սումգայիթի փախստականներին շրջում էին փողոց: Հայերի հասցեին վիրավորանքներ էին հնչում ոչ միայն խորհրդային մամուլում, այլեւ արտասահմանից: Ադրբեջանցի բանաստեղծը «Ֆիգարո»-ի 1988 թվականի հոկտեմբերի 24-ի համարում գրում էր. «Եթե նույնիսկ Սումգայիթը չլիներ, միեւնույն է, հայերը այն կհորինեին: Հայ ժողովուրդը մազոխիստ է: Նրան անհրաժեշտ է հավերժ դայքարել, ըմբոստանել մահն ու դժբախտությունը»: Եվ դատահական չէր, որ 1989 թվականի փետրվարին, ողբերգության մեկ տարին լրանալու օրը Բաքվի ցույցերում սումգայիթյան մարդասպանները հայտարարվեցին հերոսներ, որոնց դատվում էին Տյուսյեւի նկարագրած խնջույքներով. «Եվ դարձյալ մշտը խոսքը դահիճն է, եւ նզովվում են դարձյալ զոհերը»:

Անդատահի մնացած կազմակերպված հանցագործությունը, որ համատարած կեղծիքի, բռնության միջոցով ազգային հարցերը լուծելու հետեւանքն էր, նախապատմական դարձավ, որ առաջին երկրում սկիզբ առնի «սումգայիթների» շղթայական ռեակցիան: Հենց որ դարզվեց, որ Կրեմլի մտքով չի էլ անցնում ցավակցություն հայտնել Սումգայիթի զոհերի հարազատներին ու մերձավորներին, Երեւանի համալսարանի դոկտոր Սուսեն Զոլյանն առաջիններից մեկը թվարկեց առաջա «սումգայիթների» աշխարհագրական անունները. Շուշի, Կիրովաբադ, Օշ, Թուրմենիա, Ֆերգանա, Հյուսիսային Կովկաս:

Ավաղ, վերակառուցման նախաձեռնողն այդպես էլ չհասկացավ, որ այլընտրանք չունի «սումգայիթի» հաղթական գնահատականը տալու հարցում: Որպես խորհրդային վերջին դատալամենտի ժողովրդական դատգամավոր բազմիցս հանդիսացել եմ Գորբաչովի, Յակովլեւի, Լուկյանովի եւ դեպքության այլ ղեկավարների հետ: Եվ ամեն անգամ զոր եմ փորձել համոզել նրանց, որ Սումգայիթի ու «սումգայիթների» անդատաժելիության ամենաահավոր եւ վտանգավոր հետեւանքներից մեկն այն է, որ ժողովուրդն արդեն միեւնույն նշանի վրա է դնում «խորհրդային» եւ «ռուսական» հասկացությունները: Հակառուսական տրամադրությունները կամ դրանց նույնիսկ եզակի փայլատակումները երեւանյան բազմահազարանոց ցույցերի ժամանակ չլսված երեւույթ էին, եթե չասենք՝ անհեթեթություն: Իսկ սադրող հրադարակումներից, հեռուստահաղորդումներից կամ դեպական այրերի անմտածված ելույթներից եւ մանավանդ՝ սումգայիթյան դահիճների նկատմամբ դատական զավեշտախաղերից հետո արդեն սկսեցին հնչել թեկուզ թույլ, բայց հակառուսական հոսանքներ:

Միեւնույն ժամանակ, դժվար չէր հասկանալ, որ երկրում «սումգայիթների» տարածումը հանգեցնելու է նրան, որ ե՛ւ դժբախտությունը, ե՛ւ մեղքը, ե՛ւ նույնիսկ ադունահեղության դատասխանատվությունը գցելու են ռուսների վրա, թեկուզ բոնեն էլ բանդիտների ձեռքը, ինչպես արեցին (ճիշտ է, դարձյալ մեծ ուշացումով) Բաքվում, 1990 թվականի հունվարին, որտեղ իրականացավ Գորբաչովի «մարգարեությունը». կազմակերպված ցեղասպանության զոհ դարձան Բաքվի բոլոր 207 հազար հայերը: Իսկ խորհրդային (ռուս) զինվորները, որոնք փրկում էին հրաշքով ողջ մնացած մարդկանց, օգնելով նրանց հասնելու Կրասնովոդսկ, Մոսկվա եւ Երեւան, ամեն տարի հունվարի 20-ին հեռուստաէկրաններից հայտարարվում են «ժողովրդավարություն Ադրբեջանում սպանողներ»: Ցավոք, շատով հենց այդպիսի «հակառուսական» մոտեցումը թեմ կենտրում կատարվող իրադարձությունների գնահատականներում հաղթական շատ գործիչների եւ լրագրողների համար մոդային դարձավ, եթե չասենք՝ հաջության դրսեւորում:

1988-89 թվականներին Բաքվի հակահայկական ցույցերում կոչ էր արվում. «Պետք է ողջ Ադրբեջանը, Նախիջեւանը, Ղարաբաղը մաքրել հայերից, որոնցից նրանց զրկենք վրեժ լուծելու հնարավորությունից»: Ահա այսպես միաձայնեցին Սումգայիթի կազմակերպիչները երիտթուրքական գաղափարախոսության ջահակիրներից մեկի՝ Բահաեդդին Շահիրի հետ, որը հայերի ցեղասպանության հրեշավոր ծրագրի ենթակման ժամանակ, 1915 թվականին նախագգուշացրել էր. «Մենք սանձազերծել ենք շատ կարեւոր, ծանր պատասխանություն: Եվ եթե չիրագործենք մինչեւ վերջ, արդա վնասի ենթարկվենք հայերի վրիժառությունից»: Ինչպես հայտնի է, հենց այս միտքը ուսումնական ձեռնարկ դարձավ Հոլոքոսթը կազմակերպած հիտլերականների համար:

Գիտակցելով հայտնի ճշմարտությունը, որ դահիճների հանդեպ խղճահարությունը վերածվում է դաժանության՝ զոհի նկատմամբ, հայերը սակայն չդիմեցին վրիժառության: Ժողովուրդը, որն ամբարիշտ առաջինն է հրիսթոնեություն ընդունել որպես պետական կրոն, չէր կարող չիմանալ, որ ինքնամաքրման բանանքը ինքնաոչնչացման ուղղի ճանապարհն է: Իսկ զենքի վերցրեցին միայն այն ժամանակ, երբ Ղարաբաղին պատերազմ պարտադրեց: Շատ բան-աղեց, որ ժողովուրդը ոչ «Սումգայիթին», ոչ՝ «Բաքվին» կոնկրետ եղբաստեղ չտա: Այդ հակամարտությունն իրոք կոնկրետ չէ, եւ նույնիսկ տարածային էլ չէ, քանզի խոսքը ոչ թե տարածի մասին է՝ որպես այդպիսին, այլ հայերի պատմական հայրենիքի:

Օրենքի գերխնդիրը պատժի անկասելիությունն է: Իսկ վաղեմության ժամկետի սկզբունքը կիրառելի չէ ցեղասպանության նկատմամբ: Ահա արդեն 20 տարի սումգայիթյան ցեղասպանության զոհերը՝ ողջ թե մեռած, սպասում են դատաստանի՝ մարդկության հանդեպ գործած այդ ծանրագույն հանցագործության իրական կազմակերպիչների նկատմամբ: Արդարի համար չկա առավել վտանգավոր բան, քան ներկայի կարճ հիշողությունը: Հիշենք, թե հիշենք ինչպես 1939 թվականի օգոստոսին, երբ Լեհաստանի վրա էր ուղարկում իր մարդասպաններին, գոչեց նրանց հետեւից. «Մի՛ վախեցեք պատժության դատից: Այսօր ո՞վ է հիշում հայերի ցեղասպանության մասին»: Եվ մոլորակի 60 միլիոն բնակիչներ դարձան անդատաժիտ մնացած չարիքի ողբալական ռեակցիայի զոհեր:

Համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու եւ այն իրագործելու համար պատժի կրելու մասին» համաձայնագրի առաջին հոդվածի, այն ընդունող պետությունները պարտավորություն են կրում այդ հրեշավոր չարիքը ե՛ւ կանխելու, ե՛ւ պատժելու գործում: Միաժամանակ գիտակցել է պետք, որ մեծագույն հասատաստությունը հենց լավագույնն գթությունն է: Եվ միայն արդարի պատժի չտացած չարիքն է չարիք ծնում:

Լուսինե Թովմասյան. «Դեռ պատրաստ չեմ ընտանիք կազմելու»

Դերասանուհի, զեղեցկուհի, մոդել Լուսինե Թովմասյանը չափազանց լավատես է, փորձում է մթությամբ մեջ էլ փնտրել լույսի շող: Այժմ Լուսինեն վարում է ակտիվ հասարակական ու գործարարի կյանք: Շաբերը նրան անվանում են «բիզնես-լեդի»: Դերասանուհին «Նյու մեդ» ամսագրի տնօրենն է եւ «Նոր ադամոյի» հիմնադիր նախագահը: Լուսինեի խոսքերով՝ աշխատանքից չի խուսափում, կատարում է հաճույքով ու սիրով:

- Դժվար է լինել հանրաճանաչության եւ եվրոդայի ամենագեղեցիկ աղջիկներից մեկը:

- Դժվար չէ: Ընդհակառակը, շատ հաճելի է: Իհարկե, կան օրեր, երբ անտրամադիր եմ, տխուր, սակայն աշխատում եմ վատ տրամադրությունս թաքցնել: Երբ դուրս եմ գալիս փողոց, հանդիպում մարդկանց, լուսանկարվում, հասկանում եմ, որ մարդկանց հետ շփումը իմ կյանքի մի մասն է կազմում: Պարտավորություն է, որ կատարում եմ մեծ հաճույքով:

- Խոտակցություն կա այն մասին, որ շուտով նկարահանվելու ես նոր ֆիլմում:

- Այո: Ֆրանս-հայկական համատեղ ֆիլմ է: Գլխավոր դերերում Պիեռ Ռիշարն ու Արմեն Զիգարխանյանն են: Անուններն իմներին խոսում են պատասխանատվության ու պրոֆեսիոնալիզմի մասին: Ֆիլմի նկարահանումները կսկսվեն շուտով: Դերս խոսքինգ չի անցկացվել, բայց կարծում եմ, ֆիլմում կնկարահանվեն այլ հայազգի դերասաններ: Չեմ ուզում խոսել իմ մարմնավորած կերպարի ու ֆիլմի սցենարի մասին: Թող անակնկալ լինի:

- «Մի՛ վախեցիր» ֆիլմում մարմնավորում էիր դեռահաս Մարիին:

- Մարիի կերպարը հետաքրքրական է՝ բարի, լավատես, անմեղ: Նրա ու Լուսինեի միջեւ կան նմանություններ ու տարբերություններ: Ես Մարիի նման համբերատար չեմ, սակայն հերոսուհու բնավորության մեջ կան գծեր, որոնք վերցրեցի, դարձրեցի իմը: Նկարահանումներն անցան շատ լավ: Խորեն Լեւոնյանը հոյակապ դերասան է եւ խաղընկեր: Հաճելի ու պրոֆեսիոնալ խումբ էր հավաքվել, ովքեր ամեն հարցում ինձ աջակցում էին:

- Մոտակա նպատակներից մեջ ամուսնությունը ծնո՞ւմ է:

- Ոչ: Մտովի այդ հայեցի դեռ չեմ տրամադրվել: Ինձ չեմ պատկերացնում կնոջ կամ մոդեռնում հոգ տանելիս, դաստիարակելիս: Ես ինքս դեռ երեխա եմ ու իմ մասին դեռեւս հոգ եմ տանում: Սակայն դա չի նշանակում, որ չեմ ցանկանում ընտանիք կազմել, երեխաներ ունենալ: Կգա ժամանակը, երբ այդ ամենը կլինի իմ ընտանիքում: Հիմա պատրաստ չեմ ընտանիք կազմելու:

- Հաճա՞խ ես ներում:

- Ներում եմ, բայց երբեմն չեմ մոռանում վատ արարքները:

- Հետեւում ես մտքի՞դ, թե՞ սրտիդ:

- Համաձեղում եմ: Պետք է կարողանալ այնպիսի լուծում գտնել, որ բանականությունն ու զգացմունքը նույն բանը հուշեն: Իսկ եթե չի ստացվում, թողնում եմ ժամանակի վրա: Ժամանակն ամենալավ դեղատոմսն է ու ինձ երբեմն հոգախաթ չի անում:

- Քեզ ճակատագրական կին համարո՞ւմ ես:

- Ոչ: Ես շատ համառ եմ, ունեմ ցանկություններ եւ ամեն ինչ անում եմ, որ իրականանան: Իհարկե, եղել են բազմաթիվ ցանկություններ, որ այդպես էլ չիրականացան: Երեւի այդման էլ շատ չեմ ցանկացել: Եթե շատ ցանկանա, յուրաքանչյուրը կարող է հասնել իր երազանքին:

- Երջանի՞կ ես:

- Այո՛: Երբ տանն եմ, ընտանիքիս անդամների հետ, երբ խաղում եմ քրոջս փոքրիկի՝ Մեգիի հետ: Ունեմ հրաշալի ընկերներ, աշխատանք, երջանիկ եմ, որովհետեւ ինձ շատերը ճանաչում են ու սիրում: Այնքան փոքր բան է պետք երջանիկ լինելու համար: Աշխատում եմ երջանկության յուրաքանչյուր վայրկյանը վայելել:

- Մի առիթով ասացիր, արդեն մարդկանց այնքան էլ շատ չես վստահում:

- Այո՛: Առաջ մարդկանց միանգամից հավատում էի, նվիրվում ու վստահում: Հետագայում փորձը ցույց տվեց, որ այդպես չի կարելի: Պետք է վստահել միայն ամենամտերիմ մարդկանց, ովքեր միշտ անկեղծ են ու յուրաքանչյուր պահի պատրաստ են աջակցել:

Յուրաքանչյուրս մոտ էլ լինում եմ հիասթափության պահեր: Բարեբախտաբար մեծ հիասթափություն ես չեմ ստացել: Չեմ ուզում շատ նվիրվել, որ հիասթափությունը խորը չլինի:

- Շուտով գարուն է:

- Գարունն իմ ամենասիրելի եղանակներից է: Թարմություն է, գեղեցկություն, պայծառություն: Ուզում եմ, որ հաղթում բոլորը ժպտան ու միմյանց սիրեն, չարությամբ ու ատելությամբ չլցվեն: Մեր կյանքում պակասում է սերն ու նրբանկատությունը:

Սիլվայից ապատեմ բազում անակնկալներ

2007-ը Սիլվա Հակոբյանի համար բեղմնավոր տարի էր: Նա «I like» եւ «Վերջ» երգերը դարձել էին հիթեր եւ երկար ժամանակ չէին իջնում տարբեր հեռուստա եւ ռադիո երաժշտական ցերեկների բարձունքից: Երգչուհին բազմաթիվ ստեղծագործական ծրագրեր է կազմել: Շուտով կսկսվի «Քոնը չեմ» երգի հիման վրա տեսահոլովակի նկարահանումը: Ի դեմ, երաժշտության եւ խոսքերի հեղինակը Սիլվան է: Բացի այդ, երգչուհին նախատեսել է նկարահանել եւս երկու տեսահոլովակ. «Տնից փախել եմ» եւ «Ինձ հավատա» երգերի հիման վրա, որոնց հեղինակը Սաթենիկ Հակոբյանն է: Մի քանի ամսից լույս կտեսնի Սիլվայի անդրանիկ ձայնասկավառակը: Մենահամերգի մասին դեռ վաղ է խոսել: Իսկ մինչ այդ երգչուհին ուրախացնում է իր երկրպագուներին՝ հանդես գալով հայտնի ու սիրված «երկու աստղ» նախագծում, որտեղ նրա զուգընկերը հաղորդավար Արտավազդ Ամիրյանն է:

«Արտավազդի հետ շատ հետաքրքիր է աշխատել: Նրան վաղուց եմ ճանաչում: Շատ տաղանդավոր ու լավ տղա է: Երգելուց դատում է՝ շատ ամաչկոտ: Բայց կամաց-կամաց ավելի հետաքրքրվեց է երգում: Նրա մասին միմիայն լավը կարող եմ ասել: Եվ ընդհանրապես «Երկու աստղը» հրաշալի շոու ծրագիր է: Մեզ հետ աշխատում է տաղանդավոր ռեժիսոր Սյոնա Կուտաբաբյանը: այնպես որ ուրախ ու հետաքրքրական ժամանակ ենք անցկացնում»: Զուգահեռ ժամանակ Սիլվան նշեց, թե ցանկալի կլիներ, որպեսզի նախագծի հաղթողներն իրենք լինեին: Սակայն մնացած զուգընկերներին չի թերագնահատում: «Բոլորն էլ շատ տաղանդավոր են, գեղեցիկ ու լավ հաճարներ են պատրաստում»: Ի դեմ, երգչուհին նորմալ երեւույթ է համարում, երբ իր մասին բամբասում են: «Մի կողմից ժողովուրդը հետաքրքրվում է բեզանով, բայց հաճախ շատ սուտ բամբասանքներ են տարածում: Օրինակ, վերջերս լսեցի իմ մասին բամբասանք, ինչի վրա երկար ժամանակ ծիծաղում էինք: Իրոք ես ընկեր ունեմ, շատ խանդոտ է ու չի թողնում, որպեսզի ես տեսահոլովակներ նկարահանեմ: Դա իրականությանը չի համապատասխանում: Առայժմ ընկեր չունեմ եւ եթե ունենամ էլ կշարունակեմ զբաղվել իմ սիրած գործով»: Սիլվան խոստանում է, որ այս տարի շատ է աշխատելու, որպեսզի նմանատիպ բամբասանքներ չտարածվեն: Այնպես որ Սիլվայից սպասենք բազում անակնկալներ:

«32 ատամն» ԱՄՆ-ում

Վերջին շրջանում բավականին շատ լուրեր են պտտվում «32 ատամ» ակումբի ամերիկյան հյուրախաղերի շուրջ: Շատ տարածված ասեկոսեների ակումբի, համերգային ծրագիրը, որ պետք է տեղի ունենար ԱՄՆ-ում, ձախողվել է: Իր ամերիկահայ հանդիսատեսը բոյկոտել է: Տղաներին դահլիճ չեն տրամադրել եւ համերգի ոչ մի տոմս չի վաճառվել: «Ազգի» հետ զրույցում ակումբի թերեւս ամենահայտնի «ատամներից» Առամ MP3-ն ասաց, թե տարածված լուրերը սահող են ու չեն համապատասխանում իրականությանը: Այժմ, տղաներն ամենայն լրջությամբ նախապատրաստվում են կայանալիք համերգին: Առամի խոսքերով, համերգի բոլոր տոմսերը վաճառվել են, եւ խոստանում է, որ ամերիկահայ հանդիսատեսին սպասվում է անմոռանալի շոու ծրագիր՝ գեղեցիկ բեմադրություններով ու թարմ հումորով: Տղաներն ԱՄՆ կմեկնեն մարտի 1-ին, իսկ մարտի 6-ին Լոս Անջելեսի Ալեխ թատրոնում տեղի կունենա հումորային-երաժշտական ներկայացում:

Երկրորդ լուրը կապված է Առամ MP3-ի ստեղծագործական կարիերային: Ասում են Առամը խնդիրներ ունի ակումբի տղաների հետ, բացի այդ ցանկանում է անհատական երգչի կարիերա սկսել: Ակումբից հեռանալու մասին խոսակցությունները սկսվեցին դեռեւս «Երկու աստղ» նախագծի ժամանակ: «Ռումբա» տեսահոլովակից հետո բամբասանքները սասկացան: Առամն ասաց, որ մոտակա ժամանակներում չի պատրաստվում նախագծից հեռանալ:

ՊՐԵՍՄԻԵՐԱ

Նազենի Հովհաննիսյանը «Սիրային խառնակլունում»

Մարտի 5-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Սիրային խառնակլունի» ներկայացման պրեմիերան: Ներկայացման բեմադրիչը Հակոբ Դաղասնյանն է, պիեսի հեղինակը՝ Կարինե Խոդիկյանը: Ներկայացման գլխավոր հերոսուհին ու դերակատարը Նազենի Հովհաննիսյանն է, ով «Ազգի» հետ զրույցում պատմեց ներկայացման եւ իր կերտած կերպարի մասին:

«Հրաշալի ստեղծագործություն է: Սիրային խառնակլունի, որովհետեւ գործող անձինքի մեկ տղամարդ է եւ երեք կին: Սա արդեն արտասովոր վիճակ է: Շատ ջերմ խոսք է հավակվել: Տղամարդու դերում խաղում է Վիգեն Ստեփանյանը, ով ավելի քան 10 տարի բեմում չի խաղացել: Հերոսուհիներից Լարան նրա օրինական կինն է, Ջառան՝ երիտասարդ աղջիկ, ով պետք է դառնա տղամարդու սիրուհին»:

Նազենիի մարմնավորած կերպարը հետաքրքրական է ու արտասովոր: Նա տղամարդու պատասխանական սիրուհին է, ապրում է ակտիվ կյանքով ու վարում հասարակական գործունեություն: Հերոսուհին կարողանում է երկու կանանց տրամադրել տղամարդու դեմ:

«Մարմնավորած կերպարը որքան է քեզ հոգեհարազատ», հարցին Նազենին պատասխանեց. «Կերպարն ինձ նման չէ, որովհետեւ երբեմ ամուսնացած տղամարդու հետ չեմ հանդիպում: Կերպարը ինձ նման է միայն նրանով, որ երկուսս էլ կանայք ենք: Կինը միշտ մնում է կին: Որքան էլ նրանք տարբեր լինեն, այնուամենայնիվ, կանայք միմյանց նման են: Նրանք առաջնահերթ զգում են սիրո կարիք: Ներկայացման մեջ տղամարդ ինձ լրում է հանուն դեռահաս աղջկա: Իրական կյանքում, եթե տղամարդը որոշի հեռանալ, ես կդայրանամ: Բայց եթե ես հասկանամ, որ նա ինձ չի սիրում եւ ընտրում է ուրիշին, ես վառ արտահայտված ինքնասիրություն ունեմ ու երբեմ չեմ վազի նրա հետեւից»:

Ներկայացման մասին առավել մանրամասներ կարդացեք «Ազգի» հաջորդ համարներից մեկում:

Անի Քրիստի. «Ազգային մրցանակաբաշխությունը լուրջ չեմ ընդունում»

«Հիասթափվել եմ, կա նաեւ վիրավորվածության զգացում: Տավոր, ես արդեն սովորել եմ, որ իմ հանդեմ միշտ անարդար են վարվում: Ես հասկացել եմ, որ ունեմ չսիրողների մեծաթիվ բանակ: Սակայն նաեւ գիտեմ, որ կա իմ արվեստը սիրողների հսկայական բանակ, որոնք հաճույքով լսում են իմ երգերը: Ազգային մրցանակաբաշխությունը լուրջ չեմ ընդունում: Երեւի մյուս տարի չմասնակցեմ: Ինձ համար արդեն հետաքրքրություն չկա, այդ իրադարձությանը լուրջ չեմ վերաբերվում»: «Ազգի» հետ հեռախոսազրույցում ասաց երգչուհի Անի Քրիստին, որը վերջերս կայացած Ազգային մրցանակաբաշխության ժամանակ ներկայացված էր «Տարվա լավագույն երգչուհի» անվանակարգում:

Խոսելով առաջիկա ծրագրերի մասին երգչուհին ասաց, որ շուտով կսկսվեն իր երկրորդ ձայնասկավառակի պատրաստման աշխատանքները: Կնկարահանվեն տեսահոլովակներ դեռեւս չլսված երգերի հիման վրա: Նախատեսված է տեսահոլովակներից մի քանիսը նկարահանել ԱՄՆ-ում: «Տարին նոր է սկսվում, արդեն կազմել եմ բազմաթիվ ծրագրեր: Ունեմ բազմաթիվ համերգների ու շրջագայությունների հրավերներ: Սակայն դրանց մասին դեռ շուտ է խոսել», ասում է երգչուհին ու խոստանում, որ այս տարի կրկնակի եռանդով է աշխատելու, որպեսզի ուրախացնի իր երկրպագուներին:

«Յուրաքանչյուր իրավիճակից պետք է պատվով դուրս գալ»

Մարտի 22-ին Հասմիկ Կարապետյանը կմեկնի Մադրիդ

«Շուտով կվերջանան չորրորդ ձայնասկավառակիս ձայնագրման աշխատանքները: Նախատեսել էինք ձայնասկավառակն ավելի շուտ հանձնել ունկնդիրների դատին, սակայն «Երկու աստղում» զբաղվածության պատճառով չհասցրեցինք: Ձայնասկավառակը կկոչվի «Կռակի պար», որտեղ ամենայն հավանականությամբ կընդգրկվի 12 երգ: Կնկարահանեմ տեսահոլովակ «Կռակի պար» երգի հիման վրա», «Ազգի» հետ զրույցում ասաց երգչուհի Հասմիկ Կարապետյանը: Այս տարի երեւանում տեղի կունենա երգչուհու մենահամերգը: Հասմիկի խոսքերով, այն կոչվելու է կենդանի նվագակցությամբ, կլինեն շեղ բեմադրված համարներ: «Կարծում եմ գեղեցիկ անակնկալ կլինի իմ երկրպագուների համար: Ես էլ անհամբերությամբ սպասում եմ այդ օրվան: Նախատեսել եմ նաեւ բազմաթիվ շրջագայությունների արտերկրում: Մարտի 22-ին կմեկնեմ Իսպանիա, որտեղ Մադրիդի հայկական համայնքի համար կերգեմ: Ապրիլի ուշ կմեկնեմ Իոլանդիա: Հաճերգային հրավերներ եմ ստացել Գերմանիայից եւ Բելգիայից»:

«Վալենտինի օրը աշխատում էի եւ իմ երգերով ուրախացնում սիրահարված զույգերին: Սակայն տանն ինձ անակնկալ էր սպասվում: Երկրպագուներից մեկը եկել էր մեր տուն, դռան շեմին դրել ալ կարմիր վարդ, զանգի կոճակը սեղմել ու հեռացել: Ինձ համար դա մեծ եւ չափազանց հաճելի անակնկալ էր: Ես նրան չեմ ճանաչում, բայց շնորհակալություն եմ հայտնում գեղեցիկ արարքի համար», ասաց երգչուհին:

«Լուրեր են պտտվում, իբր Ազգային մրցանակաբաշխության ժամանակ Հայկոյին մրցանակ հանձնելուց հետո շատ ես բարկացել, կուլիսներում բոլորի հետ վիճել ես ու անգամ չես ցանկացել դահլիճում մնալ: Այս խոսքերը համապատասխանում են իրականությանը, թե՞ հերքական բամբասանքն է քո հասցեին», հարցին Հասմիկ Կարապետյանը պատասխանեց. «Սխալ է եւ իրականությանը չի համապատասխանում: Իմ եւ Հայկոյի անձնական կյանքը ոչ ոքին չի վերաբերվում: Ժողովրդի համար մենք գործընկերներ ենք: Նախ ես չգիտեի, որ պետք է մրցանակ հանձնեն եւ կարծում եմ, որ ամեն ինչ շատ լավ արեցի: Յուրաքանչյուր իրավիճակից մարդ պետք է պատվով դուրս գա: Ես այդպես էլ արեցի»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արթուր Աբրահամը մարզում է Գերմանիայի գեղեցկուհիներին

IBF-ի վարկածով միջին քաշում աշխարհի ներկայիս չեմպիոն Արթուր Աբրահամը երրորդ անգամ ընդգրկվել է «Գերմանիայի գեղեցկուհի» մրցույթի ժյուրիի կազմում: Այս օրերին հայ բոքսճամարտիկը մարզում է գեղեցկության մրցույթի եզրափակիչ փուլի 22 մասնակիցներին: Մարզումներն անցկացվում են Եգիպտոսի էլ Գունա առողջարանային քաղաքում: Բացի ընդհանուր ֆիզիկական վարժություններից, մարզումներում ընդգրկված են նաեւ բոքսճամարտի տարրեր:

«Մարզումների ժամանակ ես բավական խիստ էի աղջիկների նկատմամբ եւ նրանցից պահանջում էի անթերի կատարել առաջադրվող վարժությունները: Եթե ոմանք չէին կարողանում ճիշտ կատարել առաջադրանքը, սրիպված էին լինում կրկնել: Սակայն նրանց մեծամասնությունը բավական հաջող կատարում է առաջադրանքը: Ի զարմանս ինձ, նրանք բոլորն էլ լավ մարզավիճակում են: Շատ ուրախ եմ նրանց հետ անցնում մարզումներն ու ընդհանրապես մեր առօրյան», նշել է Արթուր Աբրահամը: Մարտի 2-ին մրցույթի մասնակիցները կկանգնեն ժյուրիի առջեւ, որի կազմում Արթուր Աբրահամին էլ հարկ կլինի որոշում կայացնել՝ ընտրելով Գերմանիայի գեղեցկուհուն:

Իսկ արդեն մարտի 29-ին Արթուր Աբրահամին հերթական լուրջ քննությունն է սպասվում պրոֆեսիոնալ ռինգում: Ինչպես հայտնի է, այդ օրը հայ բոքսճամարտիկը Գերմանիայում յոթերորդ անգամ ռինգ դուրս կգա՝ պաշտպանելու աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Նրա մրցակիցը 27-ամյա ամերիկացի Էլվին Այալան է, որն IBF-ի վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 15-րդ տեղը: Այալան պրոֆեսիոնալ ռինգում 21 մենամարտ է անցկացրել, որից 18-ը շահել է (8-ը՝ նոկաուտով), 2-ում պարտվել է, մեկն ավարտել է ոչ-ոքի:

Արթուր Աբրահամը պրոֆեսիոնալ ռինգում առայժմ անպարտելի է: Անցկացրած բոլոր 25 մենամարտերն էլ նա շահել է, որից 20-ը՝ նոկաուտով: Արթուրի երազանքն է միավորել աշխարհի չեմպիոնների տիտղոսները: Բացառված չէ, որ ապագան նա մենամարտի WBO-ի եւ WBC-ի վարկածներով աշխարհի չեմպիոն Կելի Պավլիկի հետ: Վերջինիս մենեջեր Բոբ Արումը հայտարարել է, որ նման մենամարտի անցկացումը հնարավոր է: Բացի այդ, արդեն հայտնի է, որ հունիսի 7-ին նախատեսված է Արթուր Աբրահամի մենամարտը Նյու Յորքի հանրահայտ «Մեդիսոն Սկվեր Գարդեն» մարզասրահում: Ճիշտ է, առայժմ մրցակիցը հայտնի չէ: Արթուր Աբրահամն առաջին անգամ կմենամարտի ԱՄՆ-ում: Եվ հաջողության դեպքում դա հայ բոքսճամարտիկին էլ ավելի մեծ ճանաչման կարժանացնի բոքսճամարտի աշխարհում:



Միջին աշխատավարձը 43 հազար եվրո է

Վերջին երեք տարիներին Ֆրանսիայի բարձրագույն խմբի ակումբների աշխատավարձի ընդհանուր ֆոնդն աճել է 120 մլն եվրոյով, իսկ ֆուտբոլիստների միջին աշխատավարձը՝ 38 հազարից 43 հազարի: Դա պայմանավորված է պրոֆեսիոնալ լիգայի հետ «Canal+»-ի կնքած եռամյա պայմանագրով, ըստ որի լիգան տարեկան 600 մլն եվրո է ստանում: Ուսի հեռուստահրավունքի վաճառքի հետ կապված հիմնախնդիրները եւ հեռուստատեսությունից ստացվելիք գումարների նվազումը թիմերին այնքան էլ չեն անհանգստացնում:

Ֆրանսիայում ոչ ֆուտբոլային միջին աշխատավարձը տարեկան 22200 եվրո է: Ընդ որում, Փարիզում այն ավելի բարձր է (28 հազար եվրո): 2006-ին Ֆրանսիայի աշխատող բնակչության 12 տոկոսը նվազագույն աշխատավարձ է ստանում, որն այն ժամանակ ամսական 1254,28 եվրո էր: Պատասխանական տվյալներով, այդ ժամանակ 3,7 մլն ֆրանսիացիներ աղքատության եւ-մից ցածր եկամուտ ունեին (650 եվրո):

2006-ի հունվարին UFF Sport Consell կազմակերպությունը հարցումներ միջոցով որոշել էր ֆուտբոլիստների միջին եկամտի չափը: Հարցի չէին առնվել ոչ պարգեւավճարները, ոչ գովազդային պայմանագրերից ստացվելիք եկամուտները, այլ նկատի էին ունեցել ֆուտբոլիստի ընտանեկան դրությունը: Ստացվել էր հետեւյալ պատկերը. ամսական միջին աշխատավարձը կազմել էր 40759 եվրո, հարկերը վճարելուց հետո՝ 35953 եվրո: Տարեկան եկամուտը կազմել էր 290208 եվրո, որից 72 հազարը պետք է ծախսվեր աղքատության համար, իսկ 218 հազարը մնում էր որպես խնայողություն: Ստացվում էր, որ ֆուտբոլիստն իր կարիերայի ընթացքում մոտ 1,9 մլն եվրո գումար կարող է կուտակել: Բնական է, որ այս թվաբանությունը խիստ պայմանական է, քանի որ նույնիսկ նույն ակումբում ֆուտբոլիստների եկամուտները տարբեր են:

2006-ի հունվարին Le Parisien թերթը հրապարակել էր «Բորդոյի» եւ ՊՍԺ-ի ֆուտբոլիստների աշխատավարձերի մասին տվյալներ, առանց հաշվի առնելու պարգեւավճարները, որոնք մի քանի տասնյակ հազարավոր եվրոյի են հասնում, ինչպես նաեւ պայմանագրով նախատեսված անհատական պարգեւավճարները: Պարզվել էր, որ «Բորդոյում» առանց հարկերը հաշվի առնելու, Դարեսիլն ու Դենիլսոնը յուրաքանչյուր ամիս 180 հազար եվրո են ստանում: Դարպասապահ Ռամեի աշխատավարձը կազմում էր 145-155 հազար եվրո: Ժեմալին, Ժյուրեսին, Աֆանան, Ամիցերը ստանում էին 90-165 հազար եվրո: Իսկ ահա Մարոկկոյի հավաքականի հարձակվող Շամախը, Ֆրանսիայի հավաքականի թեկնածու Մավուբան եւ վետերան Լասլանդը, որոնք էլ տարօրինակ էր, ընդամենը 20-30 հազար եվրո էին ստանում:

ՊՍԺ-ում ամենաբարձր աշխատավարձը ստանում էր Կալուն (ամսական 180 հազար եվրո): Ռոտենի աշխատավարձը 175 հազար եվրո էր, Պաուլետայինը՝ 155 հազար: Թիմի 18 ֆուտբոլիստներ ստանում էին միջին աշխատավարձից (40 հազար եվրո) բարձր:

«Ֆրանս Ֆուտբոլ» շաբաթաթերթը գարնանն ավանդաբար հրապարակում է «աստղերի» եկամուտների մասին տեղեկություններ: 2006-ին Ֆրանսիայի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը «Մարսելի» դարպասապահ Ֆաբիեն Բարտեզն էր (տարեկան 3 մլն եվրո): երկրորդ ցուցանիշն ուներ Սիլվեն Վիլտորը («Լիոն»)՝ 2,65 մլն եվրո: Համեմատության համար նշենք, որ Ռոնալդինյոն «Բարսելոնում» ստանում էր 8,5 մլն եվրո, իսկ տարեկան ընդհանուր եկամուտը 23 մլն եվրո է: Ֆրանսիայում ընդհանուր եկամտով առաջատար էր Ձիբրիլ Սիսեն (4,7 մլն եվրո), որը Ֆրանսիայի ամենահարուստ մարզիկների թվում 12-րդ տեղն էր զբաղեցնում: 2007-ին աշխարհի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստի դիրքը պահպանեց Ռոնալդինյոն (24 մլն եվրո): երկրորդ տեղում Դելիդ Բեհիեմն էր (17 մլն եվրո, որից 6,5 մլն եվրոն «Ռեալում» նրա աշխատավարձն էր): երրորդ ցուցանիշն ուներ դեռեւս «Արսենալում» հանդես եկող Թյերի Անրին (15,7 մլն եվրո): Անդրեյ Շեւչենկոն 12,7 մլն եվրոյով Բալակից ու Ռոնալդոյից հետո 6-րդն էր: Իսկ ֆրանսիական առաջնությունում հանդես եկող ֆուտբոլիստների ցանկն այսպիսին էր. Սիսե՝ 4,8 մլն եվրո, Պաուլետա՝ 4,6, Ժուլիենյո՝ 4,55, Գովու՝ 4,5, Վիլտոր՝ 4,45:

ԲՈՔՍՃԱՄԱՐՏ

Եվրոպայի նոր չեմպիոնը՝ Յուրի Բարաբյան

Փետրվարի 23-ի ուշ երեկոյան գերմանական ZDF-ը ուղիղ եթերով հեռարձակում էր բոքսճամարտի կիսածանրաքաշայինների եվրոպայի առաջնությունը՝ Հալլե-Զալլե քաղաքից: Բրանդենբուրգ մարզադահլիճում 3500 երկրպագու էր հետեւում բեռլինցի Թոմաս Ուլրիխի եւ նրա մրցակից 29-ամյա Յուրի Բարաբյանի՝ 8 ռաունդ տեւած դիտարժան մրցամարտին: Թեոդոսիայում բնակվող, Ուկրաինայի դրոշի տակ հանդես եկող հայազգի Բարաբյանը, որ ձախ թեւին ուռուցիկի մեծ դաջվածք ունի, հենց սկզբից երեսաց իրեն լուրջ, ուժեղ մրցակից: Նրա զենքը ձախ ձեռքն է, լավ խաբս է տալիս, բազմիցս շեշտեց մենակռանը, իսկ 3-րդ ռաունդում հստակ ձեւակերպեց՝ Բարաբյանը կարող է հաղթել: Թեպետ 6-րդ, 7-րդ ռաունդներում բեռլինցի Ուլրիխը ցույց տվեց, թե մարտնչելու ունակությունն ու ցանկությունը դեռ չեն լմել իրեն եւ փորձում էր գտնել նոր մարտավարություն, բայց նունկի հետ՝ լարդի սուր ցավերն անկարելի դարձրին Ուլրիխի հետագա պայքարը: 8-րդ ռաունդում մրցամարտն ավարտվեց՝ Յուրի Բարաբյանը հաղթեց նոկաուտով:

Կրկնենք հեռուստաբեկնաբանի ասածը՝ «Ուլրիխը դարձավ անցյալի բոքսճամարտիկ, ապագան 29-ամյա Բարաբյանինն է»:

ԷՖ. Հ.
Գերմանիա

Երկու մրցանակակիր

Հայաստանի ազգ ոճի ըմբիշները շարունակում են նախապատրաստությունը Պեկինի օլիմպիական խաղերին: Այս առումով մեր ըմբիշների համար ուժերի լավ սուղաստեղ էր Կիեւում անցկացված մրցաշարը: Հայաստանի հավաքականի կազմում մրցագրգռդուրս եկած 9 ըմբիշներից երկուսը դարձան մրցանակակիր: Մինչեւ 60 կգ քաշային կարգում ԱՄՆ-ից Հայաստան վերադարձած Մարտին Բերբերյանը հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտվելով, գրավեց 2-րդ տեղը: Իսկ ահա ծանրքաշային Ռուլան Բասիեւը դարձավ 3-րդ մրցանակակիր:

Մարտի 1-ից ազգ ոճի ՀՀ հավաքականը Ծաղկաձորում ուսումնամարզական հերթական հավաքը կանցկացնի՝ նախապատրաստվելով աprիլի 1-ին Ֆինլանդիայի Տամպերե քաղաքում մեկնարկելիք եվրոպայի առաջնությանը: Այն նաեւ վարկանիշային կլինի: Կխաղարկվեն Պեկինի օլիմպիադայի ուղեգրեր:

Սկսվում է երկրորդ շրջանը

Այսօր իսպանական Լինարես քաղաքում կսկսվի շախմատի գեմրցաշարի 2-րդ շրջանը: Լեւոն Արոնյանը 8-րդ տուրում սպիտակներով կմրցի Վեսելին Թոփալովի հետ: Հիշեցնենք, որ մեքսիկական Մորելիա քաղաքում Արոնյանը սեւերով մեկնարկային տուրում զիջել էր Թոփալովին: Այնպես որ, Լինարեսում Լեւոնը պետք է ձգտի ոեւանշի:

Ինչպես հայտնի է, Լեւոն Արոնյանը Մորելիայում ցույց տվեց 50 տոկոսանոց արդյունք՝ 7 հնարավորից վաստակելով 3,5 միավոր: Նա հաղթեց Վասիլի Իվանչուկին ու Վիշվանաթան Անանդին, ոչ-ոքի խաղաց Ալեքսեյ Շիրովի, Պետեր Լեկոյի եւ Թեյմուր Ռաջաբովի հետ: Բացի Թոփալովից, Արոնյանը պարտվել է նաեւ Մագնուս Կառլսենին:

Առաջին շրջանում բոլորից հաջող հանդես եկավ Վիշվանաթան Անանդը, որը վաստակեց 4,5 միավոր: 4-ական միավորով հաջորդ տեղերում են Ալեքսեյ Շիրովն ու Վեսելին Թոփալովը:

Առաջին մրցակիցն Ադրբեջանի հավաքականն է

Ֆուտզալի հայաստանի հավաքականը այսօր Ադրբեջանի ֆուտբոլիստների հետ հանդիպումով կսկսի իր մրցելույթներն աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում: Մեր հավաքականն ընդգրկվել է ընտրական 6-րդ խմբում, որտեղ նրա մրցակիցներն են նաեւ Չեխիայի եւ Ֆինլանդիայի հավաքականները: Հանդիպումներն անցկացվելու են Չեխիայում: Փետրվարի 29-ին մեր հավաքականը կմրցի չեխերի հետ, իսկ մարտի 2-ին հայ ֆուտբոլիստների մրցակիցը կլինի Ֆինլանդիայի ընտրանին:

Մինչ մրցավայր մեկնելը ՀՀ հավաքականն ուսումնամարզական հավաք է անցկացրել Երեւանում: Հավաքականի գլխավոր մարզիչ Ռուբեն Նազարեթյանը թիմում ընդգրկել է հետեւյալ 14 ֆուտբոլիստներին՝ Էդգարս Ակոպովին, Արսակ Հարությունյանին, Հակոբ Լոբասյանին, Արթուր Կարապետյանին, Վլադ Մխիթարյանին, Սարո Մարդանյանին, Արմեն Դանիելյանին, Արմեն Գյուլամբարյանին, Ռոմիկ Սիմոնյանին, Էդգար Կիրակոսյանին, Արման Սահակյանին, Գրիգոր Կարապետյանին, Խորեն Ջարգարյանին եւ Արմեն Սանամյանին:

Ֆուտզալի աշխարհի առաջնության եզրափակիչ փուլն անցկացվելու է այս տարվա հոկտեմբերի 4-19-ը Բրազիլիայում:

Նալբանդյանի հաղթական մեկնարկը

Բուենոս Այրեսի մրցաշարում գլխավոր մրցանակին արժանանալուց հետո Դավիթ Նալբանդյանը հաղթանակով մեկնարկեց Մեխիկայի Ակապուլկո քաղաքում ընթացող մրցաշարում: Նրա առաջին մրցակիցը սերբ Պաշանսկին էր, որին հաղթելու համար պահանջվեց երկու խաղափուլ (6-2, 7-5): Առաջին փուլի արդյունքը հաջողությամբ հաղթահարեցին նաեւ Վենսուրան, Մոնակոն, Կայերին, Ջելան, Մոնտանյեսը, Գրանյոլերսը, Կանյասը, Ալմագրոն ու Վոլանդին:

Գիժլարյանն ու Հակոբյանը կշարունակեն պայքարը

Իտալիայում ընթացող բոքսճամարտի վարկանիշային մրցաշարում մրցումների երկրորդ օրը ռինգ դուրս եկան չորս հայ բոքսճամարտիկներ: Նրանցից երկուսը հաջողության հասան եւ կշարունակեն պայքարը օլիմպիական ուղեգրերի համար:

Մինչեւ 51 կգ քաշային կարգում Դերենիկ Գիժլարյանը բացարձակ առավելությամբ հաղթեց ֆրանսիացի Ջերոմ Թոմասին: Պայքարը կշարունակի նաեւ Անդրանիկ Հակոբյանը, որը միավորներով պարտության մատնեց լիտվացի Դոնատաս Բոնդորովային (25-13): Իսկ ահա Արման Օհանյանը (91 կգ) պարտվեց լեհ Արթուր Շոիլկային: Պայքարից դուրս մնաց նաեւ Մյասնիկ Սարգսյանը (81 կգ), որը զիջեց իռլանդացի Քենեթ Եգանին: Իտալիայում օլիմպիական 26 ուղեգրերի համար մրցավեճի են ելել ուշը 50 երկրների բոքսճամարտիկներ:

Հոլը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

«Պատերազմողների խաղաղությունը»

Փետրվարի 25-ին, ժամը 23.15-00.30 գեղեցկական WDR-ը վերհիշյալ վերնագրով մի ֆիլմ ցուցադրեց՝ Ղարաբաղյան պատերազմի մասին: Ռեժիսորը **Վարդան Հովհաննիսյանն** է, խմբագիրը՝ **Ֆելիքս Կուբալլանը**: Հիշյալ փաստավավերագրությունը, որի հերոինակային վերնագիրն ավելի երկար է՝ **«Մարդկային մի պատմություն պատերազմի եւ խաղաղության օրերին»**, 2007-ին առթն արժանացել է մրցանակների՝ Նյու Յորքում Տրիբեկա կինոփառատոնում՝ «Նոր անուններ» բաժնում, երեւանյան «Ոսկե ծիրանում»՝ 4 մրցանակ, իսկ Պրահայում անցկացվող «Մեկ աշխարհ» միջազգային փաստավավերագրական կինոփառատոնում ֆիլմը ցուցադրվել է մրցույթից դուրս, արժանացել լայն ճնշակման:

Ֆիլմի հերոինակը պատերազմի սկզբում 5 օր նկարահանումներ է կատարել մարտական գործողությունների առաջին գծում, հարցազրույցներ վարել զինվորների հետ: Այնուհետեւ թողել տեսախցիկով փաստագրությունը, պատերազմը «ձայնագրել ու տեսագրել» իր մասնի վրա՝ 4 տարի մասնակցելով ռազմական գործողություններին: Զինադադարից հետո 12 տարի էր պետք, որ տեսանյութն ի մի գար՝ ինչ են անում այն տղաները, ում նկարել էր՝ խաղաղության տարիներին ինչպես զբաղված երբեմնի պատերազմողները: WDR-ի կայքէջի տեղեկատվության համաձայն, 40 000 մարդու կյանք խլած, միլիոնից ավելի փախստական գրանցած դառաբաղյան պատերազմի՝ ֆիլմի հերոսներից մեկը՝ Ֆելոն, ով նախկինում նույնիսկ մի հավ չէր կարող մորթել, հրաժարվեց հետո էլ սահմանամերձ դիրքերը չի լքել: «Ես այստեղ եմ, որ իմ հավասարակշռությունը գտնեմ: Հիմա գիտեմ, թե պատերազմն ինչ է՝ Չարն է», ասում է նա: Քանի դեռ խաղաղության պայմանագիրը չկա, հիմա ավելի վտանգավոր է, քան այն ժամանակ»:

Հրաժարանում է աղում մաթեմատիկայի դասատու Անոյի կինը: «Ոչ մի անգամ արձակուրդ էլ չեկավ՝ «բա մենք չգնանք, ո՞վ գնա», պատմում է երիտասարդ այրին: Վարդանի տեսախցիկը ռումբերի սուլոցի տակ հենց այդպես էլ արձանագրել է՝ «Մոմ, կթողնե՞ս Քեզ՝ որսը»: «Կենդանի՞՝ ոչ: Քա՛ որ, ինչ որսը լեռն, ո՞վ գնա»:

Անահիտը բուժքույր է, երեւանցի: «Ի՞նչ է Քեզ համար հայրենիքը» հարցին ռազմի դաշտում պատասխանում է. «Բառերով չեմ կարող ասել: Ուզում եմ իմ հայրենասիրությունը երեխաներիս փոխանցել: 15 տարեկան իմ տղային ասում եմ՝ եթե ես մեռնեմ, խոսք տուր, որ իմ գործը կշարունակես»: Անահիտն այսօր էլ զինվորական հանձնաժողովում է: «Պատերազմից հետո նկատեցի, որ բանակը, զինվորությունը շատ եմ սիրում», ասում է Անահիտը, որը թոռնիկի տեր է:

Քաջիկը հիվանդանոցում է: Լավ է, որ ապրում է, բայց լսողական ցնորքեր ունի, պատմում է հիվանդանոցի բժիշկը: Գեւորգը փոսատար է, նրա հանգուցյալի Ավագն էլ ողջ է: Մարտական ընկերությունը շարունակվում է:

Բանտում է Ճուսը: Նա ջոկատի ղեկավար էր, աշխույժ, հաջ տղա: «Մոսս մարիխուանա կար, բոնցիկ: Ասածում հավատում եմ, շատերին եմ տպանել, գիտեմ, որ պատասխան պիտի տամ»: «Երբ մի տեղ վեճ կա, հետու եմ խաբվում, մեկ էլ տեսար նյարդերդ չդիմացան, սպանեցիր: Պատերազմը սովորեցրեց սպանել», ասում է բանտից դուրս եկած ու երկրորդ տղայի ծնունդին սպասող Ճուսը: «Առաջինի անունը Գեւորգ եմ դրել, երկրորդինը Գրիգոր պիտի լինի՝ պատերազմում զոհված ընկերներիս անունները են»:

Դուտլիի հնչյուններով ուղեկցվող անչափ տրտուր այս ֆիլմը, որ դաս է պատերազմի ու խաղաղության, անանց ու վեհ արժեքների մասին է, վաս չէր լինի, որ ներկայացվեր Հ1-ով:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆԵՍՅԱՆ
Գեւորգիա

Սերբիան դասի կա Կոսովոն ճանաչած երկրներին

Սերբիայի կառավարությունը կազմելու է իրավաբանների թիմ, որը միջազգային դատական այցաններում հայցեր կհարուցի Կոսովոյի անկախությունը ճանաչած պետությունների նկատմամբ: Տանյուգ գործակալությունը հաղորդում է, որ համապատասխան որոշումն ընդունվել է նախագահ Բորիս Տադիչի ղեկավարությամբ երեքշաբթի օրն անցկացված Ազգային անվտանգության խորհրդի նիստում:

Վարչապետի խորհրդական Բրանիսլավ Ռիսիվոյեվիչը հայտարարել է, որ Սերբիան հայցերով դիմելու է Հաագայի միջազգային դատարան, ըստ որում ԱՄՆ-ի դեմ հայց ներկայացվելու է «ամենասեղմ ժամկետներում»:

Նրա խոսքերով, եթե ԱՄՆ վարչակազմը չեղյալ չհայտարարի Կոսովոն ճանաչելու իր որոշումը, ապա Սերբիան ԱՄՆ-ի դեմ դատեր կհարուցի «միջազգային բոլոր դատական ատյաններում»:

Սերբիայի ղեկավարությունն ընդհանուր առմամբ դրական գնահատական է տվել փետրվարի 21-ին Բելգրադում զանգվածային ցույցերի եւ անկարգությունների ժամանակ ոստիկանության ծեռնարկած գործողություններին: Այդ օրը հրկիզվել էին ԱՄՆ-ի եւ Խորվաթիայի դեսպանատները, արձանագրվել էին մի շարք այլ միջադեպեր:

Անցյալ օրը հայտնի դարձավ, որ Ջորջ Բուշի վարչակազմն ուսումնասիրում է ԱՄՆ դեսպանատան հրկիզման պատճառած վնասը հատուցելու պահանջով Սերբիայի իշխանություններին դիմելու հնարավորությունը: ԱՄՆ պետդեպարտամենտի մամլո ծառայության պետի տեղակալ Թոմ Կելսին հայտարարեց, որ վնասի հատուցման պատեհության ընդունման դեպքում ամերիկացի իրավաբանները կծեռնարկեն համապատասխան քայլեր:

ՀԱՇՎԵՊԱՀԱՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒ
աս 01.01. 2008 թ.

Ամսաթիվը

Կազմակերպության անվանումը	«Երկնքա» ՍՊԸ
Փաստաթղթերի ամսաթիվը եւ հերթական թիվը	համակարգչով խաղերի կազմակերպում
Գործունեության դասակարգման համարը	28202003292
Հարկ վճարողի հաշվառման համարը	00836731
Տպագիր միավորը	հազ. դրամ
Գանձարանի վարկը	Բարյան փող. 1 շենք 35 բն. հեռ. 64-59-03
Փաստաթղթի գործունեության իրականացման վայրը	Կոտայքի մարզ, գ. Ձորաձոր «Ե» թաղամաս 14 եւ 16 տուն հեռ. 091 945903

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
II. Ընթացիկ ակտիվներ			
Այլ դրամական միջոցներ	180	11	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190	82	-
Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ	200	1615	550
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	1708	550
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	1708	550

ՊԱՍՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի գրանցված	240	50	50
Կուտակված շահույթ	270	535	500
Ընդամենը սեփական կապիտալ	300	585	550
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	1123	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	1123	-

Քն N1

ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	1708	550

Քն N2

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2007 թ. տարեկան

Ցուցանիշի անվանումը	տող	Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անորակ)	Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ անորակ)
1	2	3	4
Առաջադրանքի, արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	010	45935	47693
Իրացված առաջադրանքի, արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	020	(44183)	(45493)
Համախառն շահույթ (վնաս)	030	1752	2200
Վարչական ծախսեր	050	(1460)	(1650)
Առաջադրանքի, արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	060	292	550
Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում	070	11416	-
Գործառնական այլ ծախսեր, այդ թվում	080	(5800)	-
Գործառնական շահույթ (վնաս)	090	5908	550
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	140	5908	550
Զուտ շահույթ (վնաս) նախորդ շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	160	5908	550

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՇԵԳՐԱՐԵԼ՝ 58-29-60

Նախագահ Գյուլը հաստատեց «Համայնքային կալվածքների» մասին օրենքը

Փետրվարի 26-ին Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը հաստատել է «Համայնքային կալվածքների» մասին օրենքը, որն էլ ուժի մեջ է մտել: Այս օրենքը թուրքական պետությանը պարտավորեցնում է առաջիկա 18 ամիսների ընթացքում ազգային փոքրամասնություններին վերադարձնել այն անշարժ գույքը, որը 1974-ին գերագույն դատարանի որոշումով առգրավվել եւ փոխանցվել էր պետական գանձարան: Օրենքն ազգային փոքրամասնություններին տալիս է նոր հիմնադրամ ստեղծելու, իսկ հիմնադրամներին՝ երկրի ներսում եւ նրա սահմաններից դուրս մասնաճյուղեր բացելու, համայնքային կալվածքները եկամուտներով հանդերձ լիարժեք տնօրինելու, անշարժ նոր գույք ձեռք բերելու եւ ժառանգելու, ինչպես նաեւ նվիրատվություն ստանալու (այդ թվում՝ արտասահմանից) իրավունքներ:

Հիշեցնենք, որ համայնքային կալվածքների օրենքը 20 օրվա բուռն քննարկումներից հետո ընդունվել էր Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի՝ փետրվարի 20-ի նիստում: Օրենքը քննարկման դնելու համար վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությանը ազգային դավաճանության մեջ էր մեղադրել ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցության խմբակցությունը, իսկ Ազգայնական շարժման կուսակցությունը դա համարել էր «Սեւրը վերակենդանացնելու» դրսեւորում եւ կարծիք էր հայտնել, որ այդ օրենքով իշխանություններն իբր խախտում են Լոզանի պայմանագրի դրույթները: Ի դեպ, այսպիսի օրենք ընդունել էր նաեւ նախորդ Մեջլիսը, նույնպես Էրդողանի կուսակցության ջանքերով: Սակայն առարկելով օրենքի 9 հոդվածներին, դա վետոյի էր ենթարկել նախկին նախագահ Սիմեոն Նեջդեթ Սեզերը: Աբդուլլահ Գյուլի հաստատած օրենքը փաստորեն նախորդի վերամշակված տարբերակն է:

Հ. Ղ.

Հայերը Թուրքիայում 100 տարի առաջ

Մարտի 1-ին Սամբուլի պատմության եւ հասարակագիտության ինստիտուտում կկատարվի «Հայերը Թուրքիայում 100 տարի առաջ» գրքի շնորհանդեսը, որի հիմքն են կազմել փոստային այն բաժակները, որոնք «Սիրելի եղբայրս» երգիկ ցուցահանդեսի նմուշներն են: Շնորհանդեսում ելույթ կունենա Օսման Քյոքերը, որը միաժամանակ ցուցահանդեսի գլխավոր կազմակերպիչն է:

Շնորհանդեսին կարծարձվեն հետեւյալ հարցերը. 20-րդ դարի սկզբներին Թուրքիայի ո՞ր բնակավայրերում էին բնակվում հայերը, որքա՞ն էր հայերի թիվը, ըստ օսմանյան պատմագրական վիճակագրության եւ հայկական աղբյուրների նրանք ինչ դեր էին խաղում իրենց բնակության վայրերի սոցիալ-տնտեսական եւ մշակութային կյանքում, քաղաքի ո՞ր փողոցում էին գտնվում հայկական եկեղեցիները, տաճարները ու դպրոցները, ինչ փոփոխություններ կրեց իրադրությունը Առաջին համաշխարհայինից մինչեւ մեր օրերը:

Հ. Ղ.

Ռուսաստանը պատրաստ է վերականգնել օդային կապը

Ռուսաստանը պատրաստ է մարտի 30-ին վերականգնել օդային կապը Վրաստանի հետ: Ռուսական կողմը այդ կապի վերականգնման համար պահանջում է, որ պատշգամական թռիչիսին մարի «Ռուսերգոնավիգացիային» իր ունեցած 2 մլն դոլարի պարտքը: Հաղորդվում է, որ կողմերի միջեւ արդեն կա պայմանավորվածություն մինչեւ մարտի 10 կատարելու վճարումը: 2006-ի աշնանից Ռուսաստանի եւ Վրաստանի ռուսական կողմի նախաձեռնությամբ դադարեցվել են օդային չվերթերը:

Հայ է, չէ՞...

Բարձրաստիճան հավաքույթների ժամանակ ավոտմեքենան վաղուց արդեն ոչ թե փոխադրամիջոց է, այլ կարգավիճակի ցուցիչ: Հանուն եզակի ու թանկարժեք մեքենաների ձեռքբերման շոու-բիզնեսի ճանաչները հրաժարվում են Մալդիվյան կղզիներում իրենց արձակուրդն անցկացնելու մտադրությունից, չէ՞ որ սիրված են հերթական հավաքույթին ներկայանալ պատված փայլով եւ շեղ ավտոմեքենայով:

Ներկայումս, ինչպես եւ անցյալում, նորաձեւ է համարվում դասականը: «Ռոլս-Ռոյսը» եւ «Բենթլին» զարդարում են մասնավորապես Ռուսաստանի գործարար ընտրախավի անդամների գրասենյակները: Շոու-բիզնեսում նման ավտոմեքենաներն առայժմ հազվադեպ են: Մինչեւ վերջերս «Ռոլս-Ռոյսի» միակ սեփականատերն Ալլա Պուգաչովան էր: Մեկ միլիոն դոլար գնահատվող այդ ավտոմեքենան Պուգաչովան եւ Գալկինն անցյալ տարի շահել են մոսկովյան խաղատներից մեկում: Եվ հիմա այդ մեքենայով հերթով երթում են մայրաքաղաքում:

Իսկ ահա բեմադրիչ Տիգրան Քեոսայանն ինքը փող կուտակեց թանկարժեք ավտոմեքենայի համար եւ գնեց միակ այնպիսի սեւ «Ռոլս-Ռոյս», ինչպիսին Ալլա Պուգաչովայինն է:

Քեոսայանի ինչի՞ն է պետք նման թանկարժեք ավտոմեքենան: «Թո՛ղ դա մնա իմ գաղտնիք», չգիտես ինչու ամոթված ասում է հեռուսահադորդավարը: Նա թեեւ վախենում է ավտոմեքենա առեւանգողներից, ասողներից շատերը վերջերս զրկվել են իրենց թանկարժեք մեքենաներից: Վերիհիշենք թեկուզ ֆոտոմոդել Աննա Լոգինովայի ողբերգական մահը, որի նոր «Մորս Կայեն» ջիպը փորձել էին առեւանգել հանցագործները:

Եվ այդուհանդերձ ասողները չեն ուզում հրաժարվել հարմարավետությունից: Օրինակ, Պուգաչովայի կամ Քեոսայանի «Ռոլս-Ռոյսի» սրահը ոչ միայն պատված է թանկարժեք կաշվով, այլեւ ունի հեռուսացույց, ինտերնետ, հեռախոս եւ բար:

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

«Տախի-ռոս» ՍՊԸ-ն դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ Ք. Երեւանում 150-170 ՄՆց ստորգետնյա կայանատեղի կազմակերպման նպատակով ստորգետնյա կայանատեղի օգտագործման թույլտվություն տրամադրելու համար:

Ք. Երեւան, Արտակունյաց 67/2

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

«Արնաքար» ՍՊԸ-ն դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ 39 Հրազդանի մարզի Գառնարիչ համայնքում հանգնում Գեղարքունիք գետի վրա «Գեղարքուն» Փ-1214-ի կառուցման ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

Հրազդանի մարզ, Ք. Գառնարիչ, Կ. Դեմիրճյան փողոց, 20 նրբ. բն. 8:

Լուսանկարները՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Դավիթ Անանիկյան: Տպաքանակ՝ 3000, սատարված է տպագրության՝ 27.02.2008, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արտակունյաց 2: